


The image shows the front cover of an old book. The cover is decorated with a marbled paper pattern featuring a dark, wavy background with intricate, branching veins of a golden-brown color. The spine of the book, visible on the left, is made of a dark, textured material, possibly leather or cloth. A small, rectangular, off-white paper label is affixed to the lower-left corner of the front cover. The label contains handwritten text in blue ink, with a red checkmark to the left of the year.

✓ Ltn
1879

1999

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԸ
ԵՒ ԷԶՄԻԱՆՈՒՆԸ

(1879-1881)

Հեղինակություն

ԱՐՄԵՆԱԿ ՍԻՒՆԻԻ

(Ս. Գործ)



«Թէ կախաղան ես բարձրացրած
«Անարգ մահով կը պատժուեմ,
«Դարձեալ ցմահուանս վերջին բոսէս
«Ազատութեն կը խօսեմ:
«Թող անօրէնն իւր կրքերին
«Զոհէ անձս անպաշտպան.
«Իմ նշանաբանն է լինել
«Հեզ զինուոր ճշմարտութեան:

Տ Փ Խ Ի Ս

1881

Ի Տպարանի Մարկիան Դ. Բաղինեանցի և Ընկ.

Дозволено цензурою 2 Мая 1881 г. Тифлисъ.
Старшій цензоръ Меликъ-Мерабовъ.



4 1870-60

38. 1886



ես ինչ անէմ, հեռացէք..... Առված եմք... մի կտոր հաց.....

«Ո՛վ սովատանջ՝ Հայաստանցի
«Ի՛մ եղբայրներս և քոյրերս,
«Ձեզ տեսնում եմ նեղութեան մէջ,
«Բայց անգոր եմ օգնել Ձեզ:

«Ուստի խնդրեմ, իբրև նուէր
«Ընդունէք սոյն գրքոյկը,
«Եւ սրանով ինձ թո՛ղ տալ Ձեզ հետ
«Ողբալու Ձեր վեճակը:

Հայաստանցի Սովատանց

Իւր

Սիրելի եղբայրներին և քոյրերին

Խորին ցաւակցութեամբ

Նուիրում է

Հեղինակը

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Ս Ո Վ Ը

ԵՒ ԷԶՄԻԱԾԻՆԸ

Դեռ Հայաստանում սովը չը յայտնուած ժամանակ, երբ «Մշակ» լրագիրը առաջին անգամ ձայն բարձրացրեց թէ, Հայաստանում սով կը լինի, և հրաւիրեց ժողովողին զորձ դնել նախապաշտպանողական միջոցներ սովի դէմ, ոչ ոք լսող չ'եղաւ: Երբ սովը յայտնուեցաւ և դարձեալ անդադար քարոզեց թէ, մինչև ձմեռն է, ճանապարհները կապած են, և սովատանջ ժողովուրդը իւրեանց տեղերումն են, աշխատենք օգնել, մեր նուէրները շուտով ուղարկենք նոցա, ապա թէ ոչ զարունը կը գայ, ճանապարհները կը բացուեն, և սովատանջները կը թափուեն մեր Լրկիրներում, և մենք ստիպուած կը լինենք նոցա պահպանել. գտնուեցան մարդիք, որոնք ծաղրեցին «Մշակին», և ոչինչ ուշադրութիւն չը դարձրին նորա ասածների վերայ: Ո՞րքան զանազանութիւն:

Եթէ առաջին անգամ «Մշակ» ասածները լսէինք, և ամենքս միանալով զորձ դնէինք նախա-

պաշտպանողական միջոցներ սովի դէմ, մենք հարկաւոր եղած օգնութիւնը կատարած կը լինէինք աւելի թեթեւ կերպով քան թէ յետոյ: Մենք առաջին անգամ պէտք է պատերազմէինք մի թշնամու, այն է սովի դէմ: Եւ կարող էինք աւելի հեշտութեամբ յաղթել քան թէ յետոյ, որ վերջը ստիպուած էինք պատերազմելու ոչ թէ մի, այլ չորս թշնամու դէմ, որոնց յաղթելը շատ դժուարին էր, որոնք էին ոովը, մերկութիւնը, հիւանդութիւնը և դաղթականութիւնը:

Մինչդեռ սովը նոր էր յայտնուած, սովատանջները օգնութիւն չը ստացան. նոքա ստիպուած ծախեցին իւրեանց բոլոր ունեցածները, մինչև անգամ միակ հանդերձը, որից առաջ եկաւ մերկութիւնը: Ժողովուրդը չ'ունենալով կանոնաւոր հագուստ պտտապարուելու ցրտից, և միւս կողմից աւելի ևս սաստկանալով սովը, և ժողովուրդը ստիպուած ուտելով զանազան վնասակար նիւթեր, օրինակ հոտած միս, բուսականութեան արմատներ, սատկած կենդանիներ և զանազան տեսակ վայրենի և վնասաւոր խոտեր և այլն, առաջ եկաւ հիւանդութիւնը, և վերջապէս ժողովուրդը հասնելով վերջին աստիճանի նեղութեան, սկսեց ցրուել զանազան կողմերում, որից տուած եկաւ դաղթականութիւնը:

Ո՞վ կարող է հերքել այս ճշմարտութիւնը. ո՞վ չէ հանդիպել և մինչև այժօրս էլ չէ հանդիպում, զոնէ Թիֆլիզում մուրացկան դաղթականներին, որոնք մերի, սոված հիւանդ և այլանդակուած ողորմութիւն են խնդրել. մայրը որդուն զրկած, երիտասարդը ծերի ձեռքը բռնած և այլն, յուսահատուած:

Այդ ժամանակ մեր տուած չնչին նուէրներով պէտք է հոգացուէին սովեալների կերակուրը, մերկերի հագուստը, հիւանդների դեղօրայքը և այլ շատ բաները, պէտք է հոգացուէին այժօրուրը, որովհետև հակառակ դէպքում հետեանքը կորստական էր, ինչպէս և եղաւ, մինչդեռ «Մշակի» նախկին քարոզները լսելով, մեր աւելի քիչ նուէրներով քան թէ յետոյ պէտք է հոգացուէր սովեալների միայն կերակուրը, և այդ բաւական կը լինէր: Իսկ յետոյ...

Եւ երբէք չեմ կարող մոռանալ այն տխուր և սրտաշարժ օրը (զոնէ ինձ համար), որը տեսայ ես 1880 թ. Մայիսի 29-ին, Համբարձման օրը, Թէլէթ*) զիւղումը: Յիրաւի այդ օրը տխուր պատկեր էր

*) Թէլէթ զիւղը գտնվում է Թիֆլիզից 12 վերստ հեռավորութեամբ, նորա հարաւայ-արեւելեան կողմը, որի «Սուրբ Գէորգ» եկեղեցին մի հռչակաւոր ուխտատեղի է, ոչ միայն Թիֆլիզի, այլ և ամբողջ վրաստանի: Նորա տօնը լինում է Համբարձման օրը:

ներկայացնում Թէլէթ զիւղը, իւր մէջ լցուած
Հայաստանցի դաղթականներով, սովեալ աղքատնե-
րով, որոնք բաղկացած էին զանազան կրօնի և ազ-
գութեան պատկանող անձինքներից:

Պուցէ հանդիսական հասարակութիւնը, որը
զարգարուած և ուրախ դէմքով ճեմում էր այդ
օրը նոյն գիւղումը, չէ էլ տեսել, կամ ուշադրու-
թիւն չէ դարձրել այն անձանց վերայ, որոնք խումբ
խումբ նրան շրջապատելով ողորմութիւն էին խնդ-
րում, և շատ անգամ նրանից հալածանքների և
մինչև անգամ հարուածների էին հանդիպում, փո-
խանակ օգնութեան:

Իսկ ազգի այն ճղնաժամիս մէջ, ի՞նչ էր շինում
Էջմիածինը, հայոց ընդհանուր Մայր Աթոռը, որը
Հայաստանցի հայու վերջին յոյս և ապաւէն է, —
ամաչում ենք պատասխանել: Էջմիածնի ընթացքը
փոխուել է, յառաջագիմութիւնից դէպի յետադի-
մութիւն:

Եթէ օրինակի համար վերցնենք մեր Հայ ազ-
գը, և նորա անցեալը համեմատենք ներկայի հետ,
մենք կը տեսնենք շատ փոփոխութիւններ. վերցնենք
Էջմիածինը: վերցնենք մեր հոգևորականութիւնը.
վերցնենք մեր ազգային պատմութիւնը և լաւ ու-
շադրութեամբ քննենք, և ի՞նչ կը տեսնենք, մենք կը

տեսնենք, որ մեր ազգի թէ կրօնական և թէ բա-
ղաբական գործողը եղել է ըստ մեծի մասին Էջմի-
ածինը, եղել են հոգևորականներ:

Հոգևորականը նստած իւր պաշտօնական ա-
թոռի վերայ, ամենայն ջերմեռանդութեամբ կատա-
րել է իւր յանձն առած ծանր և սրբազան պաշ-
տօնները: Նա իւր անձը նուիրել է իւր սիրելի ազ-
գին. հարկ եղած ժամանակ իւր վերջին ոյժերն ան-
գամ լարել է իւր ազգի գոյութեան կռուի մէջ. նա
ազգի հետ միացած անդադար մաքառել է նրա վնաս-
ների դէմ, և շատ անգամ յաղթել է:

Նա չէ բաւականացել միայն եկեղեցու մէջ
ժամերգութիւն կատարելով, այլ իւր դասից շատե-
րին ուղարկել է ուսում առնելու Բիւզանդիոն,
Աթէնք, Եդիպտոս և այլ տեղերում, եպիսկոպոսնե-
րին, վարդապետներին և հոգևոր դասի միւս պաշտօ-
նեաներին, որոնք վերադառնալով իւրեանց հայրե-
նիքը, ամենայն ջերմեռանդութեամբ տարածել են
ուսումը իւրեանց հայրենակիցների և մինչև անգամ
օտարների մէջ: Միով բանիւ հոգևորականութիւնը
զգացել է իւր պաշտօնի նշանակութիւնը. նա զգա-
ցել է նոյնպէս, որ միայն հոգևոր արարողութիւններ
կատարելը բաւական չէ, և նրանով իւր պարտակա-
նութիւնը կատարած չի լինիլ, և սկսել է զիտութեան

վերաբերեալ զանազան ծառայութիւններ մատուցանել ազգին. նա եղել է մատենադիր, եղել է պատմաբան, եղել է աշխարհագիր, եղել է թարգմանիչ, եղել է և ուսուցիչ և այլն: Իսկ այժմեան հոգևորականութիւնը ի՞նչ է կատարում...:

Այժմեան հոգևորականութիւնը — Էջմիածինը, կարող էր մեծ դեր խաղալ մանաւանդ ազգիս այն ճգնաժամին մէջ, որ սովից ոչնչացան բազմաթիւ հայերը... բայց ո՞ւմ ես ասում...:

Էջմիածինը յօգուտ հայ — սովատանջների սկսեց նուէրներ հաւաքել միայն այն ժամանակ, երբ «Մշակ» լրագիրը շարժեց ամենքի գութը, երբ հայ — սովատանջներին օգնեցին այլազգիքն անգամ, և ո՞վ զիտէ, Էջմիածինը այն հաւաքուած նուէրները լիովին հասցրեց տեղը, թէ դարձեալ ուղարկեց տոկոսաբեր թղթեր գնելու, ինչպէս վկայում է նորա օրդան «Արարատը» ալաշխերտցիների 17,000 (16,358) ր. վերաբերութեամբ (տես «Մշակ» 1880 թ. 73 համարը և կամ նոյն թուականի ապրիլի «Արարատ» ամսագիրը):

Եթէ Էջմիածնի մի որ և իցէ շինութեանը վերանորոգութիւն է հարկաւորվում, կամ մի ճնչին կարօտութիւն է զգացվում, նա իսկոյն կոնդակներով նուիրակներ է ուղարկում. զանազան հայաբնակ

քաղաքներ և գիւղեր, խիստ կերպով հեռագրում է վիճակաւոր ատենաներին — կոնսիստօրիաներին նուէրներ հաւաքելու, և ուղիյն ասած հարստահարելու, ինչպէս 1880 թ. սկզբներում հարստահարում էր խեղճ քահանաներին (Թիֆլիզումս մեր աչքով տեսած եմք), իւրաքանչիւրից տասը և աւելի րուբլիներ առնելով, որոնցից շատերը այնքան գումարը ամիսներով չեն տեսնում...*) Այդ գումարով, ինչպէս յայտնուած էր, պէտք է կարուէին Էջմիածնի տիրացուների շապկիները, մինչդեռ նոյն ժամանակ Հայաստանում ժողովուրդը սովամահ էր լինում:

Ի՞նչ կը լինէր, որ եթէ ոչ խստութեամբ, գոնէ սրտաշարժ և ազդու հրաւերներով Էջմիածինը ժողովրդի ուշադրութիւնը դարձնէր հայ — սովատանջների վերայ: Ի՞նչ կը լինէր, որ Էջմիածինը իւր

*) Մենք ինքներս ականատես եմք, ինչպէս Հ. Խորէն Ստեփանէն ուղարկուած Էջմիածնից, հաւաքում էր այս փողերը խստութեամբ, Այո՛ սաստիկ խստութեամբ, և քահանաներից շատերը չ'ունենալով փող վճարելու, դիմում էին և տոկոսով փոխ առնում ուրիշներից, ինչպէս Ս. Բ. և այլ քահանաները անձամբ մեզ դիմեցին փող խնդրելու, և պատմեցին բոլորը: Թող վկայ լինի Տփլիսի ամբողջ հայ — հոգևորականութիւնը և նոյն իսկ Հ. Ստեփանէն մանաւանդ «Արարատ» ամսագիրը:

կոնդակներն ից մէկ քանիսը ուղարկէր նուիրատու ժողովորդին աւելի սերտ տալու, այն կոնդակը որ մեր նախնեաց ժամանակ թաղաւորներին և երեւելի իշխաններին իբրև ընծայ էր մատուցանվում, իսկ այժմ ով 10—20 բուբլի նուիրէ Եջմիածնին կամ նորա ձեմարանին, նա կարող է կոնդակ ստանալ:*) Մի՞ թէ մի քանի միլլիօնաւոր հայ—ժողովուրդը Եջմիածնի շինութեանց չափ էլ չէ, մի՞թէ Եջմիածինը չէ ապրում այն նեղացած հայ—ժողովուրդի արիւնտխառն քրտինքով...:

Ահա այսպիսի հանգամանքներից ստիպուած եթէ մի որ և է անձը գրում է Եջմիածնի դէմ, նա նեղանում է և պատասխանում է, կամենալով իրան արդար ցոյց աւել, բայց իզուր է աշխատում:

Շատ ցաւալի դէպքեր տեղի ունեցան նոյն իսկ Թիֆլիզում (մեր աչքով շատերը տեսել ենք), որոնք վերաբերվում են Եջմիածնի անտարբերութեանը,

*) Մենք ինքներս ունեցած եմք մի այսպիսի կոնդակ ստացուած չնայն բանի համար, և ճանաչում եմք մի քանի անձանց, որոնք նոյնպէս արժանացել են կոնդակներին շատ հասարակ բաների համար, ինչպէս պ. Ս. Շ. և այլք: Իսկ աւելի ծիշտ համոզուելու համար վերցրէք «Արարատ» ամսագիրը մանաւանդ 1879—1880 թ. համարները և կարդացէք:

բայց մենք խնայելով նորա պատիւը, չեմք նկարագրում մանրամասնաբար և երևան հանում:*) Գոնէ նա հասկանայ իւր այն պատուի նշանակութիւնը, որին մենք խնայելով, շատ անգամ ստիպվում ենք լռել և մոռացութեան տալ շատ բաները:

Թիւրքիայից—Հայաստանից գրուած նամակներից երեւում էր, որ Հայաստանում—Հայերի մէջ գեռ ևս շարունակվում էին անտանելի թշուառութիւններ—սով, մերկութիւն, հիւանդութիւն, աղքատութիւն, զաղթականութիւն և այլն (տե՛ս «Մշակի» 1880 թ. 99 և 100 համարներում վա՛նից գրուած նամակները և մանաւանդ մեծ. Գ. Արծրունու առաջնորդող յօդուածը «Դեռ պէտք է շարունակել» վերնագրով նոյն № 100):

*) Այսպիսի դէպքեր անկարելի է մի առ. մի թուիլ, սակայն կը յիշեմ, որ մենք ինքներս տեսել եմք որ մեր, հայ հողերակա՛նութեան կամայականութեան շնորհիւ հայ երեսւայ միւրտուել է օտարազգի քահանայից, հայ աղայ և աղջիկը սլսակուել են նոյնպէս օտարազգի քահանայից և նոցա եկեղեցու գիրկն անցել. այլ և մեռելը առանց քահանայի կամ օտարազգիից թաղուել, և այլ շատ բաներ: Արդեօք այս բոլորը յայտնի չեն Եջմիածնի կառավարութեան և կամ Մանկունուն:—Մենք իւր ժամանակին բոլորը տեղեկացրել եմք նոցա, բայց ի՞նչ օգուտ:

Ժողովուրդը անասուններ չունէր զետին վարելու, ոմանք կոտորուել էին ձմեռնային խիստ սառնամանիքից և ոմանց ծախել էր կամ կերել. սերմացու ցորեան չունէր և ոչ փող իւր հարկաւոր պիտոյքները լցուցանելու, մասնաժողովների մօտ էլ շատ քիչ փող էր զանգում, և զժբաղդաբար նուիրատուութիւններն էլ քչացան և համարեա վերջացան: Ուրեմն ի՞նչ անէր թշուառ հայը. նա իւր յոյսը դրել էր մեր, Ռուսաստանցի հայերուս վերայ. նա իւր արտասուելից աչքերով մեզ էր նայում և ասում էր. «Իմ սիրելիք, Ռուսաստանցի եղբայրներս, դուք ինձ շատ բարերարութիւններ արեցիք, իմ կեանքը դուք ազատեցիք սովից (թէ և շատերը սովամահ եղան), և ձմեռնային խիստ սառնամանիքից հասցրիք ինձ մինչև այսօրուայ ամառային բնութեան զեղեցիկ օրերը: Այսօր բնութիւնը հաշտուել է ինձ հետ. ձիւնը վերացրել է դաշտերից, ցանքի ժամանակ է, իսկ ես ոչ անասուններ ունեմ զետին վարելու և ոչ փող իմ հարկաւոր պիտոյքները լցուցանելու. ուրեմն խնդրում եմ ձեզ, ո՞վ իմ սիրելի եղբայրներս, գոնէ այս ամառ ևս օգնեցէք ինձ, որպէս զի ապագայում էլ ձեզ նեղութիւն չը պատճառեմ և ինձ համար կարողանամ մի կտոր հաց գտնել. իմ պիտոյքները լրացրէք դուք, և ես ձեր արած բարերարութիւնները

բերապատիկ կը վերադարձնեմ ձեզ: Ես երբեք չեմ մոռանալ ձեր արած բարերարութիւնները: Ես պահպան եմ Հայաստանի—այն երկրի, որի սիրոյ համար դարերի ընթացքում կրում եմ անտանելի տանջանքներ, և որին լարուած են մի քանի միլիոնաւոր հայ աչքեր: Ես պահպան եմ մեր անմահ նախնեաց զերեզմանների և այն տնձանց սուրբ ոսկերքների, որոնց օրինակին հետևելով չեմ կամենում թողնել և բոլորովին ուրիշին յանձնել իմ նուիրական հայրենիքը, մինչև անգամ այսպիսի ճգնաժամներէս մէջ: Ես հսկում եմ մեր ազգային այն տխուր աւերակների և յիշատակարանների վերայ, որոնցով այս տարի—(1881 թ.*) հնազնիտական ժողովում պէտք է բարձրանայ և փայլէ հայութեան անունը և պատիւը զիտնական աշխարհի առաջ: Բարբարոսի լծի տակ տանջվում եմ և նորա սրի տակ թափում եմ իմ արիւնը հայրենեացս հողի վերայ, բայց դարձեալ չեմ կարողանում հեռանալ. դարձեալ պէտք է պահպանեմ հայութեան հայրենիքը: Ես իմ զերեզմանը ընտրել եմ այն հողի վերայ, ուր եղել հայութեան նախնի օրորոցը:

*) Ռուսաց կայսր Ալեքսանդր III-ի Թագադրութեան պատճառով յետաձգուեց մինչև 1882 թ.:

Ահա ամեն դաւանութեանց պատկանող սիրելի հայեր, այսպիսի սրտամորմոք խօսքերով զիմում էր մեզ Հայաստանցի հայր և օգնութիւն խնդրում... Ի՞նչ պէտք է պատասխանէինք և կամ ի՞նչ անէինք: Մենք գիմեցինք Էջմիածնին, հայոց ընհանուր Մայր Աթոռին և խեղճ հայու թարգման դարձանք նորա առաջ (1880 թ. «Մշակի» 115 համարում)։ Եայտնեցինք նորան հայու ցաւալի դրութիւնը... Բայց Հայաստանցի հայր ասում էր. «Ես այլ ևս չեմ կարող յուսալ Էջմիածնից. նա ինձ այն օգնութիւնը չ'արաւ ինչ որ կարող էր և ինչ որ պարտաւոր էր անել: Նա իմ արիւնախառն քրոնիքով է ասընում... և իմ լումայներով լցուած գանձարանը և իմ աշխատասէր ձեռքերով լցուած ամբարները փակել է այսօր իմ առաջ. նա զլանում է այսօր ինձ մի կտոր հաց տալ, կինս և որդիքս սովից կոտորւում են...: Ես այսուհետեւ այլ ևս չեմ կարող հաւատ ընծայել Էջմիածնին: Նա մեզ քարոզում է թէ նեղացածներին օգնեցէք, իսկ ինքը այսօր, ինձ հացի տեղ քար է տալիս և ձկան տեղ օձ: Այսուհետեւ իմ դրպանը փակուած կը մնայ և իմ աշխատասէր ձեռքերը դադարած Էջմիածնի համար, եթէ զոնէ այս ձգնաժամիս մէջ նա իւր օգնութեան ձեռքը չի կարկառի դէպի ինձ: Ես այսուհետեւ լաւ եմ ճանա-

չում իմ բարի և վատ կամեցողներին: Իսէր Աստուծոյ, իսէր հայրենեաց, իսէր ազգի և զոնէ իսէր անձի, էլ ոյժ չունեմ խօսելու, մի կտոր հաց...: Ահա մի դաղափար, որ ստացել է Հայաստանցի նեղացած հայր այնպիսի ձգնաժամին մէջ Էջմիածնի վերաբերութեամբ:

Մենք այն ժամանակ դարձանք դէպի Էջմիածինը և իբրեւ նորա բարի կամեցող խորհուրդ տուինք օգնելու սովատանջ հայուն: Նրանի թէ Էջմիածինը հասկանար իւր պարտաւորութիւնները և օգնութեան ձեռք կարկառէր սովատանջ հային. նա եթէ կամենար աւելի հեշտութեամբ կարող էր օգնել նորան քան թէ ուրիշ մի որ և է անձ: Բաւական էր որքան մնաց անուշադիր... Ժամանակ էր գործելու, ընդհանուր հայութիւնը վտանգի էր ենթարկուած... եթէ չ'օգնեց ինքը վնասուեց. նորա գանձարանը և ամբարները կարող են դատարկուել և ո՞վ պէտք է լցնէ, եթէ ոչ այն նեղացած հայը, որը կարօտ էր (և է) իւր արիւնախառն քրտինքով պահուած Էջմիածնի օգնութեանը: Էջմիածինը մեր և ուրիշների բոլոր կարգացած հրաւերներին արհամարհանքով վերաբերուեց, և շարունակեց կատարել իւր մեռելային դերը ազգային ձգնաժամին բեմի վերայ:

Մի հայ լրագիր—«Մշակը», ազգի այն ձգնա-

ժամին մէջ կարողացաւ անել այն, որը տարիներէ ընթացքում չէ կարող անգամ երազել Եջմիածինը իւր մեռելային շարժումով: «Մշակը» հայութեան մութ հորիզոնի վերայ կարողացաւ ցոլացնել այն լոյսը, որը Եջմիածինը չէ կարող անգամ իւր երեւակայութեան մէջ պատկերացնել իւր մեռելային գործունէութեամբ: Միով բանիւ «Մշակը» գործեց այն, ինչ որ պէտք է գործէր Եջմիածինը—հայոց ընդհանուր Մայր Աթոռը, բայց ոչինչ չը գործեց, և ոչ էլ կամենում է գործել (երանի ուրիշների գործածներն էլ չը քանդէր*), բայց մենք խորհուրդ տուինք նորան, որ իւր ուշադրութիւնը դարձնէր Հայութեան այն թշուառ վիճակի վերայ և գործ դնէր օգնութեան զօրեղ միջոցներ, որոնց յետաձգելը վատ հետեւանքներ կարող են ունենալ նոյն իսկ նորահամար, և Հայութիւնը այլ ևս չի նայիլ նորան այնպէս, ինչպէս նայել է մինչև ցայժմ: Ապագան կը պարզէ բոլորը: «Զօգուան քեր Դուք գիտէք»:

Թէ մեր, և թէ ուրիշ շտտերի գրուածքներից

*) Եւ իրաւ երբ Եջմիածնի վերայ դրուած է առաջին և ամենամեծ պարտականութիւն օգնելու է իւր ազգին և նա չէ կատարում իւր պարտաւորութիւնները, դորանով ժողովրդին առիթ է տալիս նոյնպէս սառը վերաբերուել գործին և քանդել արդէն ձեռնարկած կիսաշէն գործերը:

ոչ մէկը, չը կարողացաւ տրձագանք գտնել Եջմիածնի սրտում: Նա կարծես չը հասկացաւ այն բառերի նշանակութիւնը, որոնք ուղղուեցան նորան. «ընդհանուր Հայութիւնը վտանգի է ենթարկուած» բառերը նորա համար նշանակութիւն չունեցան:

Միով բանիւ Եջմիածինը շարունակեց իւր անտարբեր կեանքը, առանց ուշադրութիւն դարձնելու ազգային վիճակի վերայ, և գիտե՞ս սիրելի ընթերցող, թէ այդ ժամանակ ինչեր էր կատարվում Հայաստանում:

Հայաստանը, որ իւր բազմազան պտղաբերութեամբ իւր բնակիչներին կերակրելուց յետոյ լիացնում էր և ուրիշ երկիրներին, այդ միջոցին ներկայացնում էր մի անբեր անապատ և ուրիշ երկիրների բերքերի կարօտ: Հայաստանցի հայը, որ իւր աշխատասէր ձեռքերով և քրտնաջան աշխատութիւններով կերակուր էր մատակարարում ուրիշ ազգերին, այդ միջոցին մահաբեր և ահաւիլ սովի ճանկերով կաշկանդուած օրհասական հառաչանքներ էր արձակում—հաց, հաց, ազագակելով: Եջմիածինը հայոց ընդհանուր Մայր Աթոռը, որ առաջ—իւր վերջին լուծանքներով անգամ օգնութիւն չէր խնայում իւր ազգի և մինչև անգամ օտարների համար, այդ միջոցին ձեռք չը մեկնեց օգնելու իւր հարապատ

զաւակներին, որոնց կեանքից կախուած է և իւր գոյութիւնը:

Այն հայն էր այդ միջոցին սովամահ և օգնութեան կարօտ, որի արիւնախառն քրտինքով լցուած շտեմարաններից լեռն կերակրվում է էջմիածինը: Այն հայն էր (մինչև այսօրս) մերկ և թշուառ, որի աշխատասէր ձեռքերի արդար վաստակով զնուած եւրօպական նուրբ և մետաքսեայ թանկազին գործուածքներով զարդարուած է էջմիածինը: Այն հայն էր այդ միջոցին մոլորուած և առանց բնակարանի թափառում, որի քրտնազին լուամայներով շինուած փառաւոր և շքեղատեսիլ ապարանքների մէջ բազմած է էջմիածինը: Այն հայու լուամայներով զնուած մետաքսեայ և թաւիշեայ անկողնի մէջ է հանդուլում էջմիածինը—Մանկունուպէս հովիւները, որին այսօր ծառայում է դօշակի տեղ չօր գետինը, վերմակի (լեհեր) տեղ բաց երկինքը և բարձի տեղ քարը:

Փոքր—Ասիայի խորքերից մինչև Պարսկաստանի խորքերը հայը հաց, հաց, միայն հաց էր աղաղակում: Հայու օրհասական հառաչանքները պատռեցին Հայաստանի սահմանները և տարածուեցան ամենայն կողմը: Հայու ողորմելի աղաղակը կայծակի արագութեամբ սրվումուեցաւ կովկասի և Ռուսաստանի խոր-

քերում: Հայու հեծեծանքը թափանցեց եւրօպայի խորքերում: Հայու լացը և աղաղակը անցաւ ովկիանոսներ և հասաւ հեռաւոր Ամերիկայ և Հնդկաստան: Հայու յորդահոս արտասուքները հեղեղեցին հեռաւոր տարածութիւնները բայց չը կարողացան թրջել էջմիածնի պարիսպը: Հայու ողորմելի հեծեծանքը տարածուեց տշխարհիս հեռաւոր անկիւններում, բայց չը կարողացաւ ներս թափանցել էջմիածնի պարսպից: Հայու թշուառական ձայնը լսելի եղաւ արեւելքից մինչև արեւմուտք և հիւսիսից մինչև հարաւ, բայց լսելի չ'եղաւ սահմանակից էջմիածնին: Հայու ողորմելի և օգնութեան ձեռք կարկառեց քրիստոնէան և մահմետականը, մոփսիսականն (հրէայ) և մինչև անգամ կռապաշտը, իսկ ականջները խցեց միայն էջմիածինը և չը կամեցաւ լսել:

Էջմիածինը, որ իւր շահեկան ամեն գործերը մեծ եռանդով և ճարպիկութեամբ գործում է, չը շարժեց իւր ձեռքերից ոչ մէկը հայուն օգնելու: Էջմիածինը որ շատ հեռատես է դէպի իւր շահեկան ամեն մի չնչին գործը, բոլորովին փակեց իւր աչքերը և չը կամեցաւ նայել թշուառ հայու վիճակի վերայ: Էջմիածինը որ շատ սուր լսողութիւն ունի դէպի իւր շահեկան ամեն մի չնչին և խուլ գործը, իւր ականջները փակեց և չը կամեցաւ

լսել հայու ողորմելի աղաղակը, որ կանչում էր—
հաց, հաց:

Հայու այն գորեղ բազուկը, որով զէնք բռնած
միշտ պատերազմել էր բարբարոս իւր թշնամիների
դէմ իւր հայրենիքի և մանաւանդ Մայր Աթոռի—
Ս. Եջմիածնի համար, այդ միջոցին կախ էր ընկած
իրանից և ուժից թուլացած: Հայու այն ուժեղ ոտ-
քերը, որոնցով ռանակոխ էր արել իւր հայրենիքի
և Եջմիածնի բարբարոս թշնամիներին, այդ միջոցին
նիհարացած տատանվում էր քայլափոխել: Հայու
այն հրացայտ և վառվռուն աչքերը, որոնցով սար-
սափեցրել էր իւր հայրենիքի և Եջմիածնի թշնա-
միներին, այդ միջոցին լոյսից նուազած փակվում էին
և խոր ընկնում: Հայու այն առիւծային և վեհ
ձայնը, որով ահաբեկ էր արել իւր հայրենիքի և
Եջմիածնի թշնամիներին, այդ միջոցին նուազած և
խեղդուած հապիւ կարողանում էր արտասանել
հաց, հաց... — Իսկ այս բոլոր տեսնողը—Եջմիածինը,
ազդու թեան հայելին և օրինակողը, նայում էր սառ-
նասրտութեամբ այդ բոլորի վրայ առանց մի որ և է
կարեկցութիւն ցոյց տալու: Նա, որ այլոց պէտք է
օրինակ դառնար, այդ միջոցին չը կամեցաւ և զոնէ
ուրիշից վերցնել օրինակ: Բայց, ով ինչ կամենայ
թող ասէ կամ գրէ, հայոց ընդհանուր Մայր Աթոռ—

Ս. Եջմիածնից լսուել են և դարձեալ կը լսուեն
հետեւեալ խօսքերը.— «Ծօ անոնք ինչ ուզեն թող
գրեն, անոնց գրածը իմ փափուչիս տակն է»:

Ահա, սիրելի ընթերցող, ազգային ընդհանուր
Աթոռի մայրական խօսքերը, որոնցով մխիթարում է
իւր հարազատ զաւակներին մահաբեր ճգնաժամներին
մէջ: Ահա, այն Տեղի քաջալերական խօսքերը, որից
Հայ ազգը սպասում է իւր. ցանկալի երեւակայական
ապագան: «Եթէ ամենեքեանք իսկ լռեսցեն, քարինքն
աղաղակեսցեն»:

Թէ և մի կողմից քաջալերուած կարող ենք
ասել, որ եթէ Եջմիածինը անուշաղիր ֆնաց, բայց
հասարակութիւնը համակրութեամբ վերաբերուեց դէ-
պի Հայաստանցի նեղացած հայր, բայց դժբաղդա-
բար պէտք է խոստովանուել, որ մեր մէջ ոչ մի գործ
իւր ցանկալի նպատակին չէ հասնում:

Ինչ որ նոր է, մեր հասարակութեանը սիրելի
է, ցանկոյլ է, բայց յետոյ հասարակութիւնը զգվում
է, անտարբեր է դառնում:

Ամեն մի բան, մի ձեռնարկութիւն, մի բարե-
գործութիւն, երբ առաջին անգամ երևան է գալիս
մեր մէջ— մեր հասարակութեան մէջ, ամենքը նորան
սիրով են ընդունում, աշխատում են մասնակցել,
իւրեանց կարողութեան չափ օգնել գործին, բայց

երբ անցնում է փոքր ինչ ժամանակ, ամենքը սկսում են սառը վերաբերուել գործին հետզհետէ, և վերջապէս գործը դադարեցնում են նոյն իսկ այն միջոցին, երբ հարկաւոր է ամեն ջանքերը և աշխատութիւնները բազմապատկել կամ գոնէ շարունակել առ ժամանակ, որպէս զի գործը հասնի իւր ցանկալի վախճանին և ունայն չանցնեն ձեռնարկած միջոցները:

Երբ «Մշակ» լրագիրը առաջին անգամ յայտնեց Հայաստանի¹ անտանելի սովի լուրը և կարգաց հրաբորբոք սրտով հրաւերներ յօգուտ սովատանջների, զանազան կողմերից կայծակի արագութեամբ երևեցան օգնութիւններ, զանազան կողմերից անձրևի նման թափուեցան նուէրներ զլիաւորապէս «Մշակի» խմբագրատանը, (Ռուսա — Հայոցս մէջ), և մասամբ «Մեղու Հայաստանի» լրագրի և «Փորձ» ամսագրի խմբագրատունները, որ տեղերից ուղարկվում էր Կ. Պօլիս — սովելոց խնամող կենտրոնական մասնաժողովին: (Էջմիածին նոյնպէս ուղարկուեցան զանազան տեղերից նուէրներ, որոնցով կազմուեցաւ բաւականի մեծ գումար, բայց ղեռ մինչև այսօրս մնաց անյայտ, առանց հասնելու իւր նպատա-

կին*)։ Սովելոց խնամող կենտրոնական մասնաժողովը բաժանում էր այդ նուէրները բոլոր սովեալներին, առանց խտրութիւն դնելու կրօնի և ազգութեան մէջ, որով բարձրացաւ Հայութեան անունը և պատիւը, թէ լուսաւորեալ Եւրօպայի, թէ Թիւրքիայի և թէ նոյն իսկ հայու արիւնարբու քուրդ թշնամիների առաջ:

Ամեն մի դասակարգին պատկանող անձինք սկսեցին նուէրներ հաւաքել: Այդ միջոցին Ռուսաստանի հայերը ցոյց տուին մի օրինակելի մարդասիրութիւն, որը երբէք չը պէտք է մոռանան Հայաստանցի հայերը: Այդ մարդասիրական գործին մասնակցեցին զանազան կրօնի և ազգութեան պատկանող անձինք — քրիստոնեան և մահմետականը, մովսի-

*) Ինչպէս յայտնի է 1880 թ. Հայաստանի սովի առիթով Էջմիածինը ժապաւինեալ մատեաններ ուղարկեց զանազան հայաբնակ քաղաքներ և գիւղեր, հաւաքեց բազմաթիւ նուէրներ, և կազմեց խոշոր գումարներ, Բայց ինչ արաւ և ինչ նուազակի ծառայեցրեց, միայն ինքը զիտէ: Մինչև այսօրս հասարակութիւնը ոչ մի միջոցով ոչինչ տեղեկութիւն չէ ստացել: Գուցէ նա ուղարկեց իրան համար չահեցնելու մայրաքաղաքի քուրմերի մօտ, որոնք ազգային ահազին գումարները ձեռք առած, նորա մի հասարակ փչրանքներ նուիրում են Էջմիածնին կամ մի որ և է ուսումնարանին, և Էջմիածնի աչքերը չլացնելով, հանդիսանում են ազդի բարերարներ նորա փողերով:

ուսկանն և մինչև անգամ կռապաշտը:

Երբ Հայաստանում սովը յայտնուեց և դեռ ոչ մի տեղեց օգնութիւն չէր հասել, Հայաստանցի հայը բոլորովին յուսահատուեց. նա գիտէր, որ ոչինչ օգնութիւն չէր կարող ստանալ իւր տէրութիւնից, որպիսին էր Թիւրքիան. նրա յոյսը մնացել էր միայն մէկի վերայ. նա իւր կենաց և մահուան հարցը նրանից կախուած էր երեւակայում. նա իւր փրկութիւնը և անդունդի խորքերում զորելը նորանից էր սպասում, — դա Էջմիածինն էր, դա հայոց ընդհանուր Մայր Աթոռն էր: Բայց այս բանի մէջ Էջմիածնի գործունէութիւնը ամենքին յայտնի է: — Ուրեմն կորայ բոլորովին մտածեց Հայաստանցի հայը, որովհետեւ նրան շատ սարսափեցրեց Էջմիածնի անտարբերութիւնը: Հայաստանցի հայը դեռ մինչև այն ժամանակ չը գիտէր թէ, հիւսիսային հզօր արծուի իշխանութեան ներքոյ ունէր մի զօրեղ պաշտպան, որը պէտք է ազատէր նորան ահռելի սովի ճանկերից, — դա Ռուսա-հպատակ Հայութիւնն էր:

Երբ Հայաստանից դուրս բնակուող հայերից օգնութիւն հասաւ, Հայաստանցի հայը քաջալերուեց. նա զգաց որ անտէր չէ եղել. նա իւր տուն մտնելիս երբ ընտանիքին գտնում էր սովեալ և տխրած, քաջալերում էր և հպարտութեամբ արտասա-

նում էր հետեւեալ խօսքերը, թէ, «ինչու կը տխրէք սիրելիներս, մենք մեր կարծածին չափ անտէր չեմք եղեր, մեր ազգակիցները, որոնք բնակվում են ուրիշ տէրութեանց մէջ, մեզնէ չեն մոռացել, նրանք մեզի համար օգնութիւն կ'ուղարկեն, դուք նոցա համար աղօթեցէք»: Այսպիսի խօսքերով պահում էր նա իւր ընտանիքը, մինչև նորան նիւթական օգնութիւն էր հասնում: Յանկարծ մեռեալ ընտանիքը կենդանանում էր, թեւ էր առնում, նորա տխուր դէմքի վերայ փայլում էր մի կատաղի ժպիտ. նա իւր անձը զոհ մատուցանելու պատրաստ էր նոցա կենաց համար, որանք նրան օգնում էին, և իւրեանց նուէրները չէին խնայում նորա փրկութեան համար:

Այդ միջոցին տարաբաղդաբար երբ պէտք է «la fin couronne l'œuvre — գործին վերջը պսակէ» ինչպէս ասում են, նուիրատուութիւնները սակաւացան և համարեա սկսեցին վերջանալ: Առաջ որ լռագիրների («Մշակ»-«Մեղու») թերթերը բոլորը լցուած էին նուիրատուաց ցուցակներով, յանկարծ համարեա վերջոյաւ և հազիւ թէ մէկը պատահում էր: Այնպիսի ժամանակում երբ Հայաստանցի հայը ճանաչել էր իւր հայրենակիցներին, հեռաւոր տեղերում ցրուած հայերին, երբ նա սրտով և հոգով աշխատում էր միանալ մեզ հետ, մեզ պէտք էր դար-

ձեալ շարունակել մեր նուիրատու թիւները դէպի նա, որը դեռ ևս շատ կարօտութիւններ ունէր: Այն միջոցին երբ շինութեան հիմքը ձգում ենք և պատերը կանգնեցնում, պէտք է աշխատենք և առաստաղը ծածկել, եթէ կամենում ենք որ շինութիւնը աւարտենք և թերի թողնելով ծաղրալի չը դառնանք:

Բայց աւաղ, որ բարենպատակ բոլոր հրաւերները սառուցի վրայ են գրվում, և նորա հետ հալվում և անյայտանում են, իսկ հրաւեր կարգացողը հանդիպում է արհամարհանքի և մինչև անդամ հալածանքի: Վսյ այն անձին, որ մի առողջ և բարի զաղափար կը յայտնէ, որ կը կամենայ փոքր իշատէ օգնել իւր ազգին, և իւր ազգակիցներին հրաւեր կը կարգայ մասնակցելու: Վսյ այն անձին, որ իւր ազգի պակասութիւնները կը յայտնէ և կը կամենայ ուղղել. իսկոյն կը հանդիպէ անարգանաց և ամբողջ ազգը կը զինուի նորա դէմ (զոնէ տգէտ մասը), ամեն միջոցներ գործ կը դնեն նորան պատժելու, որ նա համարձակուեցու այս ինչ բանի վերայ խօսելու, ձայն հանելու, մինչդեռ օտարազգիները ծաղրում են և հրապարակ են հանում այն ազգի պակասութիւնները, որոնց վերայ իւր անդամը ուշադրութիւն դարձնելով չարաչար պատժվում է:

Այս բոլորը լաւ տեսանելի է մանաւանդ մեր ազգի մէջ, և զարմանալի է ուրեմն, որ մեր մէջ ոչինչ է կարողանում յառաջ ընթանալ:

Մենք լաւ համագուած ենք, որ մեր այս փոքրիկ գրեւածքը իւր ցանկացած պտուղը է կարող տալ, այլ կը հանդիպեմք անարգանաց և զուցէ (որ զարմանալի է) հալածանաց: Բայց փոյթ է, մենք կը շարունակենք համարձակ մեր կարծիքները յայտնել, և ինչ որ ասելու ունենք առանց երեսպաշտութեան կ'ասենք, առանց ուշադրութիւն դարձնելու, թէ մեր սերմերը արգաւանդ հողի վերայ ընկան թէ ապառաժ ժայռերի վերայ: Պատմանակը ինքն իրան ամեն բան կը պարզէ: Մեր սրտի մէջ այնպիսի խառնաշփոթ պատերազմներ են մղվում, որ մենք չենք կարող նոցա չը հնազանդուել, չեմք կարող նոցա չ'արտայայտել որքան կը կարողանանք: Այո՛ մենք անկարող եմք խաղաղացնել մեր ներքին պատերազմները, որոնց մեր խիղճը մեր հոգի է մեր դէմ, այլ պէտք է ակամայ ենթարկուել, որա ազդեցութեանը, և մեր կարողութեան չափ արտայայտենք մեր խղճի պահանջները. այլապէս նորան հանգստացնել չենք կարող: Այո՛, մենք չենք կարող մեռնել և չ'արտայայտել այն տխուր և ցաւալի զգացմունքները, — մեր թշուառ ազգակիցների վերաբերութեամբ,

մանաւանդ այն ահռելի սովի ժամանակ, որին ենթարկուեցան մեր դժբաղդ ազգակիցները թուրքական—Հայաստանում և Պարսկաստանում, և զուցէ աւելի ևս վատթար լինէր և Ռուսա—Հայաստանի վիճակը, եթէ ամենողորմած և բարեխնամ Ռուսաց մեծ տէրութիւնը ուշք չը դարձնէր և չ'օգնէր ժողովրդին: Իսկ այսպիսի օգնութիւնից զուրկ էր թուրքաց Հայաստանի հայը, որովհետեւ ինչպէս յայտնուեցաւ այնտեղի սովը արհեստական էր և տէրութիւնից (թուրքիա) հնարած, իսկ Պարսից տէրութիւնը, որքան կարողացաւ օգնեց իւր հպատակներին հաւասարապէս:

Այո՛, մենք ակամայ պէտք է արտայայտենք մեր տխուր զգացմունքները, — մեր դժբաղդ հայրենակիցների վերաբերութեամբ: Լեզուն ամենայն բան հեշտ կ'ասէ, և ականջներն էլ հեշտ կը լսեն: Մենք լսում էինք որ Հայաստանում սով կայ, և հեշտութեամբ էլ ասում էինք: Սովից կոտորվում էին զանազան հասակի երկու սեռի անձինք, և գերեզմանին շատերը չ'արժանանալով թափվում էին դաշտերի մէջ և զազանների և գիշատիչ թռչունների կերակուր էին դառնում: Քաղցածութիւնից ստիպուած նոքա ուտում էին այն բոլոր նիւթերը, ինչ որ հանգիստում էր նրանց, առանց ուշադրութիւն դարձնելու,

թէ ինչեր էին նոքա: Մենք հրաժարվում եմք մեր տկար զրջով նկարագրելու այն ահռելի սովի հարուածները: Երևելի հանճարը և ամենաբեղմնաւոր գրիչն անգամ, կը դժուարանայ մանրամասնօրէն նկարագրելու այն բոլոր սարսափելի արկածները, որոնց թափեց մահաբեր սովը իւր աիրաժ տեղերում: Նթէ մանրամասնօրէն յայտնի չէ, դո՞նէ մի գաղափար կազմած կը լինի մեզանից իւրաքանչիւրը այն սովի վերաբերութեամբ:

Եթէ մէկի որդին կամ մի որ և է բարեկամ կամ ազգական մեռնում է, մինչև անգամ մի փոքրիկ երեխայ, նորա ծնողները և բարեկամները երկար ժամանակ սուգ են անում, ողբում են, քանի որ կը մտաբերեն իւրեանց սիրելոյն: Գնում են եկեղեցի, գերեզմանատուն, և նորա գերեզմանի վերայ ողբալով հովացնում են իւրեանց սրտերը: Իսկ քանի քանի անձինք—ծերեր և երիտասարդներ, պատանիներ և մանուկներ—երկու սեռից ևս զոհ գնացին անբնական մահուան, ահռելի սովին Հայաստանում: Քանի, քանի անձինք գերեզմանին չ'արժանանալով կերակուր դարձան վայրենի զազանների և գիշատիչ թռչունների: Ո՞վ գիտէ թէ ժամանակով ինչ պիտի անգամներ կարող էին դառնալ թէ մարդկութեան և թէ ազգի համար, այն բազմաթիւ դժբաղդ արա-

քաճները, որոնք կարճ ժամանակում անյայտացան աշխարհիս երեսից, միայն մարդկային անուշադրութեան պատճառով: Սիրելի ընթերցող, լաւ մտածիր, արդեօք նրանց, մայրը չէ՞ր մեծացրել, արդեօք նոքա մեզ նման մարդիք չէին:...

Մենք այստեղ մի հարց կառաջարկենք. երբ Հայութիւնը մօտ էր իւր այսպիսի կորստին, ո՞վ էր պարտաւոր առաջին անգամ օգնութեան ձեռք մեկնել, ընդհանուր Մայր Աթոռը հայոց — Եջմիածինը, թէ հասարակութիւնը, որը Եջմիածնից պէտք է օրինակ վերցնէր. — ամեն ոք կը խոստովանուի որ Եջմիածինը պէտք է առաջին անգամ օգնութեան ձեռք մեկնէր իւր տառապեալ և մերձ իմահ ազգայնոց, բայց աւանդ, ցաւօք սրտի ամեն ոք կը խոստովանուի, որ Եջմիածինը այդ միջոցին, սկզբից մինչև վերջը շարունակեց կատարել իւր մեռելային դերը ազգային ճղնաժամին բեմի վերայ:...

Եջմիածինը իրաւունք չունէր ասելու, թէ «ես անկարող եմ օգնել ազգին», և յիրաւի նա ականատես լից հնազանդուեցաւ, ամաչեց, և ժապաւինեալ մատեններ ուղարկեց զանազան հայաբնակ քաղաքներ և գիւղեր նուիրատուութիւն անելու յօգուտ Հայաստանի սովատանջների. հաւաքուեցան խոշոր գումարներ և զիգուեցան Եջմիածնում Հայաստան

ուղարկուելու նպատակով, բայց... մենք դեռ ևս ոչինչ տեղեկութիւն չունենք յիշեալ գումարների վերաբերութեամբ:

Հրապարակաւ յայտնի և ամենքին ծանօթ 17,000 (16,358) ռուբլին, որ հաւաքուեցաւ 1878 թուին, յօգուտ այն 3,000 չքաւոր և սովեալ հայ ընտանիքի, որոնք վերջին Ռուս — Թուրքական պատերազմի ժամանակ, զենեալ Տէր — Ղուկասեանի*) առաջնորդութեամբ զաղթեցին Ալաշկերտից դէպի ռուսաց սահմանները, և ապաստանուեցան իւրեանց մայր և վրջին յոյս Եջմիածնի գրկում, դեռ ևս մնում է Եջմիածնի ձեռքում, առանց համեմուտ իւր նպատակին:

Սիրելի ընթերցող, դու գոնէ մի բան լսած կը լինես այն ողորմելիների մասին, ուրեմն աւելորդ եմ համարում նրանց վրայ խօսելու, և սիրելիս, դուցէ կարդացած լինես և եթէ չէ, կը խնդրեմ կարդա, մեր տաղանդաւոր և երևելի վիպասան (романистъ) պ. Բաֆֆիի «Իսկիթը» վէպը, և կը տեսնես որ սոյն վէպի երևելի հերոսուհի — Գեթադը Ղալան, որ վերջիշեալ զաղթականների միջ էր, զոհ վիսաց ումի ճանկերին ուրիշ շատերի հետ, այն ժամանակ երբ

*) վախճանեցաւ 1881 թ. Յունիւարի 8-ին:

Էջմիածնի ամբարներում փտում էր հինօրեայ հացը, և երբ Էջմիածնի օդը թնդում էր շամպայնեան բոմբիւններով: Աւելի մանրամասն կարող ես կարդալ վերոյիշեալ Բաժնի «Խենթը» վէպի մէջ, իսկ ես կը դառնամ մեր հարցին:

Վերոյիշեալ 17,000 ռուբլին, յայտնի է որ դեռ ևս մնում է Էջմիածնի ձեռքում: Երբ Հայաստանում սովը յայտնուեց, հայ լրագրութիւնը— «Մշակ» լրագիրը հարց բարձրացրեց յիշեալ 17,000 ռուբլու վերաբերութեամբ, և պահանջեց, որ Էջմիածինը յիշեալ գումարը ուղարկէ Հայաստանի սովատանջներին: Եւ յերաւի «Մշակը» որպէս ազգային ներկայացուցիչ, ինչպէս ազգային ամեն մի անդամ, իրաւունք ունէր պահանջելու և հակառակ դէպքում յանգիմանելու, որովհետեւ նա տեսնում էր Հայաստանի բնակիչների թշուառութիւնը, անտանելի սովը, և տեսնում էր նոյնպէս Էջմիածնի ձեռքում ազգային գումարներ: Ի՞նչու չը պահանջէր, ի՞նչ օրուայ համար պահէր:

Ախեալ այն օրից, այն րոպէից, երբ «Մշակը» առաջին անգամ հարց բարձրացրեց, թէ այն 17,000 ռուբլին արդեօք ի՞նչ նպատակով է պահուած Էջմիածնում, և կամ ի՞նչ նպատակին պէտք է ծառայէ,— ամենքս սպասում էինք մէկ ազնիւ պատաս-

խանի, որը պէտք է ստանայինք Էջմիածնից: Նորա երկար լռութիւնից յետոյ, «Արարատ» ամսագիրը, կղերական անկեղանոցի այդ քաջ զինակիր և զօրեղ պաշտպանը, պատասխանեց, որ նշ թէ 17,000—է այն գումարը, այլ 16,358, և թէ այդ գումարով Վեհ. Կաթողիկոսի հրամանով գնուած են տոկոսաբեր թղթեր, Ալաշկերտի Իւչ-Քիլիսայի Ս. Յովհաննու վանքի դպրոցի անունով, և թէ նորա տոկոսով պէտք է կառավարուի յիշեալ դպրոցը: Բայց «Մշակը» չընդունելով «Արարատի» անազնիւ պատասխանը, սկսեց շարունակել իւր իրաւացի պահանջները (տես «Մշակի» 188) թ. № 73-դ և նոյն թուի ապրիլի «Արարատ» ամսագիրը):

(Այս հարցի վերաբերութեամբ բաւականի գրուեցան «Մշակի» մէջ, որոնք իրաւամբ պահանջեցին Էջմիածնից հաշիւ և տեղեկութիւն վերոյիշեալ գումարի վերաբերութեամբ): Վերջապէս Էջմիածնի երկար լռութիւնից յետոյ, մենք նորից հանդիպեցանք 1880 թ. հոկտեմբեր ամսի «Արարատ» ամսագրի մէջ մի յօդուածի— «Մշակի» Յ. Մ. յօդուածագրին պատասխան» վերնադրով, և Ս. Վ. ստորագրութեամբ, որի մասին հարկ եմք համարում մի քանի խօսք ասել: Ինչպէս երևում է Էջմիածինը կամ անաբժան համարելով և կամ անզօր գտնուելով ազգի իրաւացի

պահանջներն դէմ, փաստաբաններ է վարձում, ինչ-
պէս և վերոյիշեալ յօդուածի հեղինակ պ. Ս. Վ. ին,
իւրեան փոխանակ պատասխանելու ազգի պահանջ-
ներին: («Մշակի» պահանջները, ինչպէս կարծում են
խաւարամիտները) որոց թւում և էջմիածնը, ոչ
թէ մի անհատի, մի որ և է անձի պահանջներն
են, այլ իրաւամբ կարող ենք ասել, որ ազգի արձա-
դանքն է, ընդհանուր արտայայտութիւնն է):

Էջմիածնի նպատակն է դարձեալ, ինչպէս
երեւում է նորա փաստաբանների գրուածներէն, ժո-
ղովրդին կերակրել խաբեբայ յոյսերով: Նորա պա-
տասխանը դարձեալ այն է, թէ ոչ թէ 17,000,
այլ 16,358 ր. գումարով վճար. Վաթսուղիկոսի
հրամանով (չը հիտեմք թէ ինչ իրաւունքով և
ո՞ւմ սեփականութեան վրայ էր հրամայում) տո-
կոտաբեր թղթեր գնուեցան Ալաշկերտի իւշ-քիւիսայի
Ս. Գովհաննու վանքի գպրոցի անունով, և թէ այն
գումարի տոկոսով պէտք է կառավարուի յիշեալ
գպրոցը:

Նախ և առաջ մենք հարց եմք առաջարկում
իրաւամբ էջմիածնին և նորա փաստաբաններին, այն
16,358 ր. իւր հաւաքուած և էջմիածնում պա-
հուած օրից մինչև այժմ ոչինչ շահ չունին, մինչև
այժմ 17,000-ի չը հասաւ և կամ նորանից էլ

չանցաւ: Եթէ յիշեալ 16,358 ր. մի կանոնաւոր տեղ
շահեցնուէր, այսքան ժամանակամիջոցում ոչ թէ
17,000, այլ 20,283 ր. 92 կ. պէտք է դառնար,
իսկ էջմիածնի ձեռքում նոյն ուղտի պոչը մնաց,
որը ոչ երկարեց և ոչ կարճացաւ, թէպէտ վերջինիս
վերարերութեամբ կասկածաւոր ենք: Փառք Աստու-
ծոյ դարձեալ և զովեստ էջմիածնին, որ այն
16,358 ր. կենդանի մնաց նորա ձեռքում: այս կողմից
էջմիածնը թող վայելէ ընդհանուր ազգի շնորհա-
կալութիւնը: Իսկ ազգը, այսուհետեւ իրաւունք ունի
պահանջելու էջմիածնից Ալաշկերացիների անունով
20,283 ր. 92 կ. մինչև 1881 թ. Յունվարի 1-ը: Ահա
մեր հաշիւը. վերոյիշեալ 16,358 ր. գումարը սկսու-
եց հետզհետէ ուղարկուել էջմիածնին 1878 թ.
օգոստոս տմից, բայց մենք կը հաշուենք 1879 թ.
Յունվարի 1-ից, 1878 թ. վերջին երեք ամիսները
բաց թողնելով: 1879 թ. Յունվարի 1-ից մինչև 1881
թ. Յունվարի 1-ը, կը լինի ուղիղ երկու տարի կամ
24 ամիս: Վաճառականները առ հասարակ տալիս
են 1 րուբլու վերայ 1 կոպէկ ամսական շահ. եթէ
այսպէս հաշուենք, մեր 16,358 րուբլին կունենայ և
16,358 կոպէկ ամսական շահ, այսինքն 163, ր.
58 կ.: Այս գումարը կրկնելով 12 անգամ =
(16358 × 12), կը ստանանք = (196296, այսինքն 1962 ր.

96 կ. տարեկան շահ: Այս գումարը նոյնպէս կրկնելով 2 անգամ— (196296×2) , կը ստանանք $= 392592$, այսինքն 3925 թ. 92 կ., որ է մեր գումարի ձիշտ երկու տարուայ շահը, որը աւելացնելով $16,353$ թ. վերայ— $(16358 \text{ թ.} + 3925 \text{ թ.} 92 \text{ կ.})$, կը ստանանք $= 2028392$, այսինքն 20283 թ. 92 կ.: Ուրեմն ազգը, այսուհետեւ իրաւունք ունի պահանջելու Եջմիածնից Ալաշկերտցիների անունով 20283 թ. 92 կ. մինչև 1881 Յունվարի 1-ը*):

Մենք իբրեւ ազգի մի անդամ, ունենք իրաւունք հաշիւ պահանջելու Եջմիածնից, և ահա այս է մեր հաշիւը, իսկ թէ Եջմիածինը համաձայն չէ մեր այս հաշուի վերայ, իբր թէ շահը շատ եմք հաշվում, և կամ չը պէտք է հաշուենք,— այդ մասին մենք իբրեւ մի անհատ, իրաւունք չունեմք ազգի կողմից համաձայնուելու Եջմիածնի առաջարկութիւններին, այլ թէ Եջմիածինը ինչքան է կամենում շահը հաշուել, և կամ ի՞նչ պայմաններով,— այդ մասին

*) Եւ 1881 թ. Յունվարի 1-ից սոյն 20283 թ. 92 կ. կը համարուի որպէս զրամազուլիս, և սորա տոկոսին կը հաշուի ըստ վերայիշեալի, մինչև որ, յիշեալ գումարը կը մնայ Եջմիածնի ձեռքում:

նայթող բանակցէ Կ. Պօլսի հայոց ազգային ժողովի հետ, նախապէս յայտնելով հայ լրագրութեան միջոցով իրիտութիւն հասարակութեան, թէ ինչ պայմաններով է բանակցում ազգային ժողովի հետ: Ազգային ժողովը նոյնպէս պարտաւոր է հայ լրագրութեան միջոցով յայտնել ազգին իւր վճիռը, այս հարցի վերաբերութեամբ:

Իսկ ինչ կը վերաբերի Եջմիածնի այն պատասխանին, թէ 16,358 թ. գումարի տոկոսով պէտք է Ալաշկերտի գաւառում դպրոց կառավարուի, մենք իրաւամբ կասենք, որ այս ճգնաժամիս մէջ հարկաւոր չէ այն դպրոցը, մինչդեռ նոյն տեղում ժողովուրդը սովից ճանձի նման կոտորվում է: Այլ մենք նախ խոնարհութեամբ և ապա իրաւամբ, կ'առաջարկենք Եջմիածնին, որ յիշեալ գումարը ըստ կանոնի ուղարկէ Հայաստան յօգուտ սովատանջների, աղքատների, որոնք դեռ ևս շատ կարօտութիւններ ունեն, և ոչ թէ մտաւոր, այլ դեռ մարմնաւոր կեանքի և նիւթական-տնտեսական կարօտութիւններ ունեն: Միթէ՞ կարելի է սովամահ ժողովուրդի համար դպրոց հիմնել, և սովեալ, հաց մուրդ մանուկներին զիրքը ձեռքին տալ: Մենք ուսման կարեւորութիւնը Եջմիածնից լաւ գիտենք, միայն ամենայն բանը ժամանակին պէտք է յարմարեցնել: Զը մօռանամք յիշելու, որ 1880 թուին, սովի ժամանակ

յօգուտ Հայաստանի սովելոյ հաւաքուած նուէրներէ հաշիւը, դեռ ևս չքմիածինը չէ ներկայացրել հասարակութեանը: Կը ցանկամք և կը սպասեմք չքմիածնից մանրամասն հաշիւներ, մեր այս բոլոր հարցերի վերաբերութեամբ:

Չքմիածնի փաստաբանները թող իւրեանց հանդիստը վայելեն, իսկ ազգը իրաւունք ունի շարունակել իւր իրաւացի պահանջները դէպի չքմիածինը, մինչև որ, նա հասկանայ իւր պարտաւորութիւնները, և քաջայայտ եմք, որ մեր ամենիցս յարգուած և ազգային շահերի ազնիւ պաշտպան «Մշակ» ազատամիտ լրագիրը, կը շարունակէ թարգման հանդիսանալ ազգի արտայայտած ազնիւ մտքերի: Հեռու չէ այն ժամանակը, երբ ազգը կը հասկանայ իւր խաւարամիտ, նենգաւոր ղեկավարների խարդախութիւնները, և անէծք կը կարդայ նոցա դառն յիշատակներին....:

Մեր այս գրուածքը, մի փորձուած հանձարի ատենաբանութիւն չէ, և ոչ կրքերի արտայայտութիւն, այլ այն անկարգութեանց ձիշտ և աննշան նկարագրութիւն է, որը կատարվում է ներկայումս մեր հոգեւորականութեան մէջ, և հարկ եղած ժամանակ, պատրաստ եմք բոլոր մեր զրաճները, ձիշտ փաստերով ապացուցանելու, ումը կը վերաբերի:

Կարծեմ ինքը, մեր հոգեւորականութիւնն էլ լաւ հասկանում է իւր արածները և կարօտ չէ մեր բացատրութեան: Այո, ինքը լաւ գիտէ իւր արածները, և հասկանում է իւր ընթացքի վնասակար հետևանքները, թէ իրան և թէ ազգի համար, բայց օգուտ քաղելով ազգի անտարբերութիւնից, և մեծամասնութեան տգիտութիւնից, շարունակում է և գուցէ դեռ երկար կը շարունակէ իւր վատ ուղղութիւնը: Իսկ ազգը, զոնէ իրան լուսաւորեալ ձեւացնող բարձր դասակարգը, այսպէս ասել ինտելիգենցիան, բաց աչքով նայում է այս բոլոր անկարգութեանց վերայ և անուշադիր թողում: Ուրեմն, մենք չը պէտք է շփոթուենք, չը պէտք է զարմանանք, երբ մեր արտաքին թշնամիները նեղում են մեր ազգին և վնասում: Այո, չը պէտք է զարմանանք, երբ մեր ազգը ունի իւր ներքին թշնամիներ, աւելի վնասակար քան արտաքինները: Վերցնենք օրինակ իրրեւ մեր ազգի արտաքին թշնամի թիւրքիան, և քննենք, թէ ինչ աւելի վնաս է տալիս մեր ազգին, համեմատելով մեր այժմեան հոգեւորականութեան հետ:

Թիւրքիան զլուսաւորապէս աշխատում է իւր հպատակ—հայերին որքան կարելի է տղիտութեան մէջ պահել, որպէս զնորանց աչքերը չը բացուեն, և իւր խարդախ քաղաքականութիւնը չը ճանաչեն,

և որ զարմանալի չէ վերջ չը տան:—Ո՞վ չի խոս-
տովոնուի, որ մեր ներկայ հոգևորականութիւնը
նոյնն է կամենում, որովհետեւ նա լաւ հասկացել է,
որ ազգը քանի լուսաւորուի, այնքան իւր բռնաւոր
ոյժը կը թուլանայ: Այս իրողութեան ամենապարզ
ապացոյցներ կարող են լինել, իւրեանց պաշտօնին չը
համապատասխանող անարժան հոգևոր պաշտօնեաներ
կարգելը, սկսեալ Եջմիածնի ամենաբարձր հոգևոր-
ականից, մինչև գիւղական յետին ժամկոչը:

Նոյնպէս պարզ ապացոյցներ կարող են լինել,
գաւառական և դիւղական մեր ուսումնարանների ան-
խնամ թողնելը, և ժողովրդի բողոքների վերայ ու-
շադրութիւն չը դարձնել*), և այլ շատ բաներ:

*) Ժողովրդի իրաւացի բողոքների վերայ ուշադրու-
թիւն չը դարձնելը մեր հոգևորականութեան—Եջմիածնի
կողմից, ոչ թէ մի պատահական բան է, այլ մի տեսակ
արմատացած սովորութիւն է, որը չէ կարող չը կատա-
րել: Թողնենք բազմաթիւ ապացոյցներ, և յիշենք միայն
իբրև վկայ, Նուխոյ գաւառի Վարդաշէն գիւղի հայ բնա-
կիւնների, և նոցա քահանայ Տէր—Գալուստի գործը:
Թող նոյնպէս վկայ լինեն Տփլիսու, Երևանու, Ղարաբա-
ղու, Աղէքսանդրօպօլու և այլ տեղերի հայ բնակիչների
բողոքները, և նոցա անուշադիր մնալը: Թող լաւ մտա-
բերեն այս բոլորը, Եջմիածնի Վեհափառ հայրապետը, և
նորա կանցլէր Մանկունին:

Թիւրքիան հարկեր ժողովելու նեղացնում է իւր
հպատակ—հայերին. հարկ եղած ժամանակ չէ խնա-
յում նոցա կեանքն անդամ. կեղեքում է, մաշում է.
երբեմն իւր պաշտօնեաների և երբեմն քրդերի և
չերքէզիների ձեռքով, աւար է առնում նոցա բոլոր
կայքերը. բանտարկում է, ծեծում է և անպատմելի
նեղութիւններ է տալիս նոցա:—Այլ հաւատա՞մս ըն-
թերցող, որ այս բաների մէջ յետ չէ մնացել և մեր
անգութ հոգևորականութիւնը,—«հոգեպտուղ», «ա-
թուաղրամ» և այլ արդիւնքներ ժողովելիս: Կ'ասենք
և հարկ եղած ժամանակ կ'ապացուցանենք, որ շատ
անգամ հոգևոր նուիրակները, իհարկէ Եջմիածնի
թեաղրութեամբ, կաշառել են թուրք պաշտօնեա-
ներին, քուրդ բէյերին, և այլ քեղեքիչ շատ դազան-
ներին, և նոցա սպառնալիքներով և չարչարանքներով,
առել են խեղճ հայ ժողովրդից զանազան անկանոն
արդիւնքներ, չը խնայելով նոցա կեանքն անդամ, ծա-
խել են տուել նոցա ընտանի կենդանիները, որոնք
կազմում են նոցա կեանքի միակ միջոցը*):

*) Թողնենք այն բազմաթիւ դէպքերը, որոնք կատա-
րուել են անցեալում և ներկայումս, և իբրև ապացոյց,
յիշենք միայն Յ. առաջնորդի գաղտնի դաշնակցութիւնը
քուրդ Ֆաթթիւհ—բէկի և տաճիկ Միրզա—փաշայի հետ,
հայ ժողովրդին հարստահարելու գործում: Թող վկայ լինեն
յիշեալ երեք անձինք, և նոցա վայրենի կամայականութիւ-
նից տանջուած հայ ժողովուրդը:

Արքեպիսկոպոս Ժամանակներս, Թուրքիան արգելեց
 Կովկասեան հայ հրատարակութիւններին, մանկէ իւր
 տէրութեան սահմանները, օրինակ Տիփլիսու «Մշակ»
 և «Մեղու Հայաստանի» լրագիրներին, և «Քորձ» ամ-
 սազրին, որոնք Ռուսա—Հայոց սրտերը կապում էին
 Թուրքա—Հայոց սրտերի հետ, և այդ բանի վնասա-
 կարութիւնը իւր համար, Թուրքիան նկատեց։—Կար-
 ծեմ լսած կը լինես ընթերցող, և եթէ չես լսել,
 այժմ ինձ հաւատացիր, որ այս բանը մեր ներկայ
 հոգեւոր բարձր. իշխանութիւնը, վաղուց գործել է։
 Սորա սրարդ ապացոյց կարող է լինել այն իրողու-
 թիւնը, որ դեռ ևս մի քանի տարի առաջ, Էջմիածնի
 Գէորգեան ձեմարանի աշակերտներին արգելուցաւ կար-
 դալ Տիփլիսու «Մշակ» լրագիրը*): Էջմիածնի ձե-
 մարանի վաչութիւնը, արդարեւ հասկացաւ, որ «Մշակը»
 որպէս մի ազատամիտ և առողջ զաղափար սէնեցող
 լրագիր, կարող էր իւր ստորագրեալ աշակերտներին
 մէջ վարդապետել ինքնաձանաչութեան ազնիւ ոգին, և

*) Այս գէպը տեղի ունեցաւ սորանից մի քանի
 տարի առաջ։ Թող վկայ լինի հայ լրագրութիւնը, Էջմի-
 ածնի ձեմարանի վարչութիւնը, և նոյն իսկ ձեմարանի
 աշակերտները, իւրեանց խղճի մտօք։ Մեզ պատմել են
 նոյն աշակերտներէից պպ. Կ. Ս. և այլք։

այդ բանի վնասակարութիւնը իւր համար, նա նը-
 կատեց Թուրքիայի նման։

Իսկ ամենապարզ օրինակ այն իրողութեան, որ
 Թուրքիան չէ խնամում իւր հպատակներին, և աշ-
 խատում է իւր տէրութեան մէջ և եթէ կարելի է
 ամբողջ աշխարհում ջնջել հայի (և առ հասարակ
 քրիստոնեայի) անունը, 1879—1881 թ. Հայաս-
 տանում տիրած սարսափէն սովն էր, որ հնարուած
 էր նոյն իսկ Թուրքիայի զաղանի քաղաքականութեամբ,
 և արհեստական միջոցներով, և այս իրողութեան
 աւելի պարզ ապացոյց կարող է լինել այն, որ Թուր-
 քիան ոչ միայն չ'աշխատեց օգնել իւր հպատակ—
 հայ սովատանջներին, այլ աշխատեց որքան կարելի
 է արգելել դէպի նոցա ուրիշների օգնութիւնը, որ
 և չը հասաւ իւր ցանկալն նպատակին, ինչպէս
 յայտնի է ընթերցողաց։ Սե կարծեմ, որ այս դէպ-
 քում դարձեալ օրինակներ բերելը, և մեր հոգեւո-
 րականութեան Թուրքիայի հետ համեմատելը, աւե-
 լորդ է։ Ամենքին յայտնի է, որ և այս դէպքում մեր
 հոգեւորականութիւնը, յետ չը մնաց Թուրքիայից
 դէպի Հայաստանի սովը ունեցած իւր դիրքով։

Ահա այս սովի ժամանակ Էջմիածինը—մեր
 ներկայ հոգեւոր բարձրագոյն իշխանութիւնը, դէպի
 Հայաստանի սովը ունեցած իւր դիրքով, պարզ ցոյց է

տալիս, որ նա ոչինչով յետ չէ մնացել հայ ազգի արտաքին թշնամիներէր: Սիրելի ընթերցող, Գուք այստեղ տեսաք, եթէ միայն հաւատացիք, որ մեր ազգը ունեցել է և իւր ներքին թշնամիներ, աւելի վնասակար քան արտաքինները, և այդ պատճառով մենք իրաւունք չունենք դանդաղանշելու, թէ Թիւրքիան, կամ այս ինչ բարբարոս ազգը նեղացնում և վնասում է մեր ազգին, այլ պէտք է աշխատենք, զեւ ազատուիլ մեր ներքին թշնամիներէր — հիմնաւորապէս փոխակերպել մեր հոգեւորականութիւնը, և ապա դառնալ դէպի արտաքինները, ապա թէ ոչ, մինչև որ մեր ազգը կը մնայ նոյն հոգեւորականութեան ձեռքը, ինչ որ այս 1867 — թուականից սկսուած մինչև ներկայ մեր օրերը, մենք իրաւունք չունենք բողոքելու ուրիշների դէմ:

Սիրելի ընթերցող, այստեղ հոգեւորականութիւն ասելով պէտք է հասկանանք Եջմիածնի ներկայ կառավարութիւնը, և ոչ ընդհանուր հոգեւորականութիւնը: Մենք ներկայ հոգեւորականութեան մէջ ունենք այժմ Ներսէս և Խրիմեան, որոնց պէտք է մեր ազգը յարգէ, և եթէ կարելի է ասել պաշտէ, իբրև ազգային մի գանձ, մի սրբութիւն, և յիրաւի նոցա վեհ անունները, հայոց ապագայ պատմութիւնը պարտաւոր է իւր մէջ դրօշմուած պահել, ոսկեայ խոշոր

տառերով, և հայ ազգը պարտաւոր է կենդանի արձաններ կանգնեցնել նոցա սուրբ և անմոռաց յիշատակների համար, որի նմանները դուցէ չը կարողանանք տեսնել բաւականի ժամանակների ընթացքում, և ներկայումս էլ չունենք:

Սիրելի ընթերցող, հոգեւորականութիւն ասած բառս, ոչ այլ ինչ է, եթէ ոչ Եջմիածնի ներկայ կառավարութիւնը, որը իշխում է մինչև ներկայ օրս: Այո, նոյն իսկ սորա վերայ է մեր խօսքը, և մեր բոլոր այս զրուածքը: Եջմիածնի այժմեան կառավարիչները համարվում են մեր ազգի համար, ոչ միայն անօգուտ, այլ և վնասակար, և անդառնալի կորուստների պատճառ: Այն նոյն իսկ այդ ժամանակից, սկսվում է երևան գալ մեր ազգի մէջ մի անձ Մանկունի անունով, որը մեր հոգեւորականութեան զխաւոր կառավարութեան դեկը ձեռք առած, և հետզհետէ զօրանալով, ինքնակամ իշխում է մինչև ցայսօրս, և ինչպէս երևում է գործերից, այդ Մանկունին մեր ազգի և մանաւանդ Ռուսա — Հայոցս համար, դարձել է նոյն իսկ այն Նիկող, որը ունեցել են Լեհաստանի հայերը XVIII-դ դարու սկզբ

ներում—(1625*): Նիկոլը, Լեհաստանի հայերի առաջնորդ (եպիսկոպոս) էր Լէոպոլդ (Լյվով) քաղաքում, և որպէս զին մի գաղափար կարելի լինի կազմել Լեհաստանու հայերին նորանից հասցրած վնասների վերայ, միայն այսքանը կասեց, որ Նիկոլի այնտեղ առաջնորդ կարգուելու ժամանակ, Լեհաստանում հաշվում էր 40,000—հայ գերդաստան, և Նիկոլի շնորհիւ... այժմ մէքանի տուն միայն... և նոքա էլ մեր հօգեօրակաւութիւնից բոլորովին անխնամ թողած...—Ամօթ և նախատինք մեզ, հինգ միլիոն հայերուս, որ մեր ազգը խաղաղք ենք դարձրել Մանկունիների ձեռքում: Ամօթ մեր ազգի Ինտելիգենցիային, և իրան լուսաւորեալ ձեռքնող բարձր տասակարգին, որ բաց աչքով նայում է ազգաւոր Մանկունիների անկարգութեանց վերայ, և լեզուն փորը զցած, խոնարհւում է նորա կամայականութեան առաջ, և զեւ դարձեալ համարձակվում է իրան ազատամիտ և լուսաւորեալ ձեռքները,

*) Արդարեւ Մանկունին դարձել է մեզ համար մի նոր ազգակործան Նիկոլ, և իւր անգութ և վարենաբարոյ գործերով, ժամանակով կարող է փոխարինել, ոչ թէ մի, այլ մի քանի Նիկոլներու Բաղմաթիւ ապաղոյշները չը յիշելով, յիշենք իրեն փաստ, միայն Աւտիացիներու ցաւալի պատմութիւնը (տես 1881 թ. «Մշակ» ի № 5-ը:

մինչդեռ գերի է տղէտ, և բռնաւոր Մանկունիների ձեռքում:

Արջապէս ինչ որ եղաւ, եղաւ, էլ ոչինչ չեմք կարող օգնել, այժմ աշխատենք ներկայի և ապագայի համար. անցեալը վաղուց զնացել է:

Այն սարսափելի սովը ու որ լաւ յիշում է, մի այնպիսի պատիժ էր մարդկային անուշադրութեան, որ երբեք չը պէտք է մոռանանք նորա հարուածները, և նորա վերքերը, հազիւ թէ կարողանան բժշկուել երկար ժամանակուայ ընթացքում:

— «Chaque saison a ses avantages»:—Այն սովը, մեզ համար լաւ օրինակ էր և պատիժ անզգուշութեան. նա մեզ համար այն կամուրջ կարող է համարուել, որի վրայ այսուհետեւ պէտք է աշխատենք զգուշութեամբ անցնել: Սովը, սովորեցրեց մեզ շատ բաներ, և պատժեց մեր անզգուշութիւնը: Համարձակվում ենք ասել, որ սովը ունեցաւ իւր մեծամեծ վնասների հետ և լաւ հետեանքներ: Մինչև այն սովի յայտնուելը, Հայաստանցի հայոց մեծամասնութիւնը ոչինչ գաղափար չունէր կազմած իւր ազգակիցների վերաբերութեամբ, որոնք բնակվում են Առաստառում և Եւրոպայի և Ասիայի զանազան քաղաքներում: Հայաստանցի հայոց մեծամասնութիւնը, տեղեկութիւն տնդամ չունէր) թէ վերայիշեալ տեղերում հայեր

կան: իսկ սովի ժամանակ վերոյիշեալ տեղերում
ցրուած հայերի ցոյց տուած օրինակի լի մարդասի-
րութիւնը, դէպի իւրեանց սովեալ ազգակիցները,
հասկացրուց նորանց (Հայաստանցի հայերուն), որ
նոքա անտէր չեն եղել, ինչպէս առաջ կարծում էին:

Այն օրից սկսեցին նոքա, ըմբռնել ազգայնու-
թեան վեմ գաղափարը, և արագաքայլ ընթացքով
մօտենալ մեզ մօտ, սրտով և հոգեով: Յայտնի է որ,
Հայաստան ուղարկուող նուէրները, հայոց մասնաժո-
ղովները բաժանում էին բոլոր սովեալներին, առանց
խտրութիւն դնելու կրօնի և ազգութեան մէջ, որով
Հայութիւնը բարձրացաւ և կարողացաւ պարծենալ,
նչ միայն ազգասիրութեամբ և կրօնասիրութեամբ, որ
օգնէր միայն իւր ազգակիցներին և դաւանակիցներին,
այլ օգնելով անխտիր բոլորին, կարողացաւ պարծե-
նալ ընդհանուր մարդասիրութեամբ, որը անհրա-
ժեշտ է ամեն մի անձին, որը կրում է իւր վերայ
ամարդ անունը, որովհետեւ մարդս ստեղծվում է
բնութեան մէջ, օգնելու նչ միայն իւր ազգակիցնե-
րին և դաւանակիցներին, այլ ընդհանուր մարդկու-
թեանը (իհարկէ գլխաւորապէս իւր ազգին), լինի
նա քրիստոնեայ, թէ մահմետական, մովսիսական թէ
կռապաշտ:

Այն սարսափելի արհեստական սովը, թիւրքիայի

կողմից վերջին և զօրեղ միջոցն էր, որով աշխատեց
Հայութիւնը ջնջել իւր տէրութեան մէջ, բայց նը-
պատակին չը հասաւ: Հաստատ աղբիւրներից յայտնի
է, որ հայերը շատ աննշան թուով զոհ զնացին
սովին, համեմատելով թուրքերի և քուրդերի հետ,
որոնք մեծ բազմութեամբ և ահագին թուերով,
զոհուեցան նոյն իսկ իւրեանց կառավարութեան
ձեռքով հնարուած մահաբեր մեքենային — սովին,
թէ և իհարկէ հայերն ևս ենթարկուեցան նոյն մե-
քենայի կործանիչ ազդեցութեանը:

Այն արհեստական սովի հետեւը թիւրքիայի
ձեռքով, ասացինք, որ նրա վերջին և զօրեղ միջոցն
էր Հայութիւնը ոչնչացնելու իւր տէրութեան մէջ,
որը նրան չը յաջողուեց, այլ ընդհակառակն, բարձ-
րացաւ Հայութեան անունը, որովհետեւ թուրքերը և
քուրդերը երբ տեսան, որ հայերը թշնամութիւնը չը
յիշելով բոլորովին, սովի ժամանակ օգնում են իրանց,
նրանք համոզուեցան, որ հայերը, խաղաղ և բարե-
րար ժողովուրդ են, մինչև անգամ իւր թշնամիների
հետ, ձգնաժամների մէջ, այլ որ իրանք միշտ թշնա-
մութեամբ են ապրում միմեանց հետ, այդ թուրքաց
կառավարութեան շնորհով, և նորա խտրաբա-
ղաքականութիւնիցն էր, որով նա աշխատում է միշտ,
իւր հպատակ ազգերի մէջ թշնամութիւն ձգել:

որպէս զինոքա միմեանց օգնելով և յառաջ զնա-
լով, չը կարողանան նորա խարդախ քաղաքականու-
թիւնը ճանաչել, որը նրա համար կորստական է:
Ուրեմն հաւանական է, որ Թիւրքիան զրկուեցաւ
իւր յանկաջած նպատակից:

Վերջացնելով խօսքս, չեմ կարող չը յիշել և
ների սրտմ սովի շարունակութիւնը Հայաստանում*):
Սիրելի համազգիներս, սոյն գրուածքիս նպատակը չէ
աւետել Ձեզ, որ Հայկական թշուառութիւնը անցել
է, որ Հայաստանում այլ ևս սով չկայ, — ոչ: Ո՛հ,

*) Թէպէտ ներկայ տարուս 'սկզբներում մի քանի
ուրախալի լուրեր ստացուեցան Հայաստանից, որոնք ա-
ւետեցին, որ Հայաստանում այլ ևս սով չ'կայ, բայց նոքա
անհիմն էին, ինչպէս վերջը ստուգուեցաւ: Սովը, դեռ ևս
շարունակվում է Հայաստանում: Եթէ սովը անցած է լի-
նէր, դարձեալ չէր կարելի ամեն ինչ վերջացած համարել:
Յայտնի է, որ այնպիսի ահաբեկ սովին, յաջորդում է ան-
տանելի աղքատութիւն, դանազան տեսակ վարակիչ հի-
ւանդութիւններ, և այլ շատ տեսակ անպատմելի թշուա-
ռութիւններ: — Ուրեմն, մինչև որ Հայաստանում սովը չէ
վերջացել, և ժողովրդին նեղում են նոյնպէս աղքատու-
թիւնը և վարակիչ հիւանդութիւնները, մենք չը պէտք է
դադարենք օգնելու մեր հայրենակիցներին, որոնք Հայաս-
տանում մտնում են անտանելի թշուառութեանց ներ-
քոյ: ...Տեսնենք: ...

դժուարանում եմ ասել, որ Հայկական թշուառու-
թիւնը, Հայաստանի սովը, դեռ ևս շարունակվում է
ներկայումս, և դուցէ աւելի սաստիկ...

Սոյն գրուածքովս միայն աշխատեցի որքան կարո-
ղացայ, և նպատակ ունեմ ցոյց տալ, թէ ազգի այն ծոցնա-
ժամին մէջ, որպիսին էր սովը, ի՞նչ արաւ Հայութեան
պարծանք — Էջմիածինը, և կամ հասարակութիւնը:

Էջմիածինը, իւր զործունէութեամբ արդէն ցոյց
տուեց, որ նա փոխել է իւր վաղեմի ընթացքը: Էջ-
միածնի այժմեան կառավարութիւնը, ազգի համար
համարվում է անօգուտ, և որ առաւել է փաստա-
կար: Հաստատ կարող ենք ասել և արդէն ճշմարիտ
իրողութիւն է, որ այդ կառավարութիւնը, մի շո-
շափելի օգուտ չէ բերել ազգին, բացի մեծամեծ
վնասներից և անդառնալի կորուսաներից*): Յոյց

*) Յաւօք սրտի ստիպուած եմք խոստովանուել այս
ճշմարտութիւնը, որ մեր ազգը, փոխանակ շահուելու, չա-
բաչար վնասների և անդառնալի կորուստների է երթար-
կուած: Եկամուտների անկանոն գործածելը և համարեայ
թէ սպառելը, ազգին հաշիւ և տեղեկութիւն չը տալը,
տասնեակ հազարներով հայ ժողովրդի օտարազգի եկեղե-
ցու գիրկն անցնելը, ինչպէս Ուտիացիները, և այլ շատ
ցաւալի դէպքերը, ազգային մնացորդների, — հնութիւննե-
րից շատերի չը պահպանելը, — յիշեմք միայն այն, որ Տի-
խիսու երբեմն առաջնորդ կարապետ արք — Կալսկոպոսի

տուէք՝ ինձ մի որ և է օգուտ, որ այսքան ժամանակամիջոցում չեմիածինը—ներկայ կառավարութեան ձեռքով տուած լինէր ազգին (երանի վնասներ էլ չը տար): Ի՞նչ օգուտ է տուել նա, այսքան ժամանակամիջոցում:—Նս հիմնել է մի ձեմարան, բայց նրան զօհել է ազգային շատ հիմնարկութիւններ, փակել է բազմաթիւ ուսումնարաններ: Ո՞ր են ներսէս Ե. Կաթողիկոսի հիմնած գործարանները էջմիածնում:—Իողորը քանդուել են, և նրանց պարագայներով շինուել է Կէորգեան ձեմարանը: (Որիչ բաների վրայ լուում ենք): Իսկ ի՞նչ օգուտ է տուել

մատանին, էջմիածնի ներկայ կառավարութիւնից ընծայ տրուեցաւ իւր նախկին փոքրաւոր, և այժմ առաջաւոր ներկայացուցիչ—Ստեփանիկին, որը իւր նշանադրութեան գիշերը ընծայեց իւր հարսնացուն, ի նշան ամուսնական միաբանութեան: Ահա այսպէս, այն մատանին, որ երբեմն կրում էր ազգային ներկայացուցիչ արք—եպիսկոպոսը, էջմիածինը բարեհաճեցաւ ընծայել մի կնոջ—ահա էջմիածնի այժմեան կառավարութեան նշանաբանը: Եւ թէ սա մասնաւոր օգուտներ է տուել ազգին, կը նշանակէ՝ տունը արտաքուստ նախել իսկ ներսից հիմքը և պատերը քանդել...:

Սորան աւելացնեմք և կապարից ձուլուած—թեատրաժ սերովքներով և քերովքներով դարդարուած այն մահճակալը, որը էջմիածնից ընծայ տրուեցաւ նոյն Ստեփանիկին... խեղճ Հայ ազգ...:

ազգին այդ ձեմարանը, այսքան ժամանակամիջոցում:—ապագայում դա կընծայէ ազգին թշուաւ հրէշներ, ինչպէս սկսած է այժմ: Մաղիուել է փոքր ինչ ձայնադրութիւն, և տպագրուել են ձայնադրեալ շարականներ, բայց ի՞նչ օգուտ ազգին. խեղճ հոգեորականները հարստահարուել են և ստիպմամբ առել են շարականներ, իւրաքանչիւրին վճարելով 40 ր.*):

*) Մի տեսակ նոր սովորութիւն կայ մեր բարձր. հոգեորականութեան մէջ. երբ տիրացուն գնում է էջմիածին քահանայ ձեռնադրուելու, նա նախ պարտաւոր է 40 ր. վճարել, ձայնադրեալ (նոսայ) շարական առնել, և ապա իրաւունք ստանալ ձեռնադրուելու: Տիրացուներից շատերը, ինչպէս Ե. և Գ., մեղ պատմել են և մինչև անգամ լաց են եղել, որ կարողութիւն չունեն 40 ր. վճարել, և ոչ կարօտութիւն են զգում շարականի, բայց երբ անկարելի էր, նոքա ստիպուած էին տոկոսով փոխ առնել, և 40 ր. վճարել, մի ձայնադրեալ շարականին: Սորանից մի քանի տարի առաջ, ամեն մի եկեղեցին ստիպուած էր նոյնպէս ճաշոց գիրք գնել էջմիածնից, վճարելով իւրաքանչիւրին 150 ր., չը նայելով որ ամեն մի եկեղեցին վաղուց ունէր յիշեալ ճաշոցը: Որքան յիշում եմք, Տփլիսու եկեղեցիներու մի քանի երեսփոխանները, փորձեցին ընդդիմադրել, բայց յաղթանակի որ կողմ մնալը լաւ չեմք յիշում: Այս բանը Մանկունին լաւ կը գիտենայ, որովհետեւ ճաշոցական տօնավաճառի կառավարիչը նա էր, ինչպէս պատմում է յիշեալ գրքի յառաջաբանի մէջ, ինքը Մանկունին:

«Զորն ասեմ, կամ զորն խոստովանեմ»:

Բայց մոռացանք յիշելու, որ Էջմիածինը, ներկայ կառավարութեան ձեռքով, մի մեծ ծառայութիւն է մատուցել ազգին. — նա Հիմնել է մի ամսագիր — «Արարատ» անունով, և կրօնական, պատմական, բանասիրական, բարոյական և ազգային սրբազրամայով: Բայց ի՞նչ օգուտ, երբ նրանով փոխանակ կրօնազիտութեան և կրօնական համբերողութեան, կրօնական հայածանք է քարոզել, փոխանակ պատմութիւն սովորցնելու, պատմութիւնը ազաւագել է, փոխանակ բանասէրների հետաքրքրութիւնը շարժելու և բաւականացնելու, նրանց զգուացրել է, և վերջապէս փոխանակ ազգին: Ծառայելու, նորան վնասել է*), և այլն, և այլն և այլն...

*) Նախ և առաջ մենք ցաւելով ամսագրում եմք, որ սոյն ամսագիրը կրում է նուիրական «Արարատ» անունը: Մենք խորհուրդ եմք տալիս յիշեալ ամսագրի խմբագրութեան, որ կամ փոփոխէ ամսագրիս նիւթերը և համապատասխան դարձնէ կրած անունն, և կամ եթէ անկարելի է նիւթերի փոփոխելը, դնէ փոխէ ամսագրիս անունը: Մենք ինկատի ունենալով ամսագրիս միջի նիւթերը, նորա համեմատ կ'առաջարկենք հետեւեալ մի քանի անունները, որոնցից որը յարմար դատէ թող ընտրէ: Ահա անունները՝ «Մղզաւանոց», «Արքերի հրացան», «Աղերակալն զբոսարան», «Սաւարի զօրավիգ», «Լուսաւորութեան թշնամի»:

Սիրելի ընթերցող, ահա տեսանք, որ Էջմիածինը, որ Հայաստանցի հայու վերջին յոյսն է, ոչինչ է գործում նորա համար: Ուրեմն, այժմ Հայաստանցի հայու միակ յոյսը և օգնականը, մենք, — նորա ազգակիցներս ենք, և պէտք է աշխատենք օգնել նորան:

Սիրելի ընթերցող, եթէ Դուք ծերունի էք յիշեցէք, որ ջեզ նման ալեւոր և պատկառելի ծերունիները, սովամահ են լինում և ոչնչանում Հայաստանում...

Սիրելի ընթերցող, եթէ Դուք երիտասարդ էք, յիշեցէք, որ ջեզ նման կորովի և եռանդուն երի-

«Տգիտութեան նեցուկ», և այլն: Դուք է «Արարատի» խմբագրութիւնը նեղանայ և բարկանայ յանդգնութեանս վերայ, բայց թող նա լաւ հասկանայ, որ իւր ամսագիրը մի լաւ բան է, այլ որ այնքան բազմաթիւ բաժանորդներ ունի, յայտնի է, որ մեծամասնութիւնը կազմում են հոգեւորականներ, որոնք ստիպուած են ակամայ բաժանորդագրուիլ: Իսկ մի քանի աշխարհականները, ստանում են ի պատիւ Էջմիածնի, և ոչ թէ կարգաւու Գ. և Բ. քահանաներից, ամեն մի «Արարատի» համարը առանց թերթիւրը կտրատելու (նոքա բոլորովին չեն կարգում, ինչպէս և ուրիշ շատերը), առնում եմք հինգ կողէկով (ուրեմն տարեկան 60 կ.), և ուղարկում եմք հայ ուսումնարաններից մէկ քանիսին, իբրեւ ընծայ:

տասարդները, ոչնչանում են Հայաստանում անգութ սովից, որոնք պէտք է հանդիսանային ազգային գործողներ:

Միեւն ընթերցող, եթէ Դուք պատանի էք, յիշեցէք՝ որ Ձեզ նման զեղեցիկ և աշխոյժ պատանիները, զոհ են գնում անգութ և մահաբեր սովին, Հայաստանում, որոնք ո՛վ զիտէ ապագայում ինչ գործողներ պէտք է դառնային, թէ ազգի, և թէ մարդկութեան համար: Այո՛, այն քնքոյշ օրիօրները և թոթովախօս մանուկները, — ազգի ապագայ ծնողները, զոհ են գնում սովին, միայն մարդկային անուշադրութեան պատճառաւ, որոնք ապագայում դառնալու էին մարդկութեան անպաճառ, և գուցէ ինչպիսի գործողներ: Իսկ այսօր, թուլացած և շրնչասպառ տարածվում են Հայաստանի հողի վերայ, շատերը գերեզմանին չ'արժանանալով: Ո՛հ անբաղդ ծնողներ, ինչպիսի ցաւերով և նեղութիւններով ծնել և մեծացրել էք Ձեր որդւոց, յուսալով, որ ապագայում դառնալու էին մարդկութեան անգամներ: Իսկ այսօր սովամահ...

Ո՛վ սիրելի համազգիներս, ինչ դաւանութեան էլ որ պատկանէք Դուք, շտապենք ձուլուել ազգային մի ընդհանուր ձուլարանի մէջ, և օգնենք զրօքազդ մեր ազգակիցներին, մեր Հայրենեաց տխուր

աւերակների պահապաններին, մեր ապագայ թեւ և թիկունքներին:

Դուք, մեծապատիւ պարոնայք, երբ շագանակազոյն սիգարը ծխելով կապտազոյն ծուխ կ'արձակէք բերանից, յիշեցէք՝ որ Ձեր ազգակից դժբաղդ եղբայրները Հայաստանում սովատանջ, կենդանի չունչ են արձակում բերանից և ոչնչանում...

Եւ Դուք, քնքոյշ տիկիներ և օրիօրներ, երբ Ձեր քնքոյշ, մատներով կը զարկէք և կը բաղնեցնէք նուազարանի հնչիւնները, յիշեցէք, որ Ձեր ազգակից դժբաղդ քոյրերը Հայաստանում, իւրեանց մատներով գետին են փորում և արմատներ որոնում, իւրեանց քաղցը յաղեցնելու:

Սիրելի համազգիներս, մի մոռանաք Ձեր զրօքազդ ազգակիցներին, որոնք Հայաստանում հեծեծում են թշուառութեան շղթայներով կաշկանդուած: Երբ Դուք Եւրօպական զգեստներով կը զարդարէք Ձեր մարմինը, յիշեցէք՝ որ Ձեր դժբաղդ ազգակիցները Հայաստանում, մերկ և ամօթով թափառում են մոլորուած: Երբ Դուք, բազմատեսակ և անուշահոտ կերակուրներով և ըմպիչքներով կը գոհացնէք Ձեր ճաշակը, յիշեցէք, որ Ձեր դժբաղդ ազգակիցները Հայաստանում, ցամաք հացի կարօտ թափառում են քաղաքից քաղաք և զիւղից զիւղ:

Հայ, հայ, աղաղակելով: Երբ Դուք, նստած շքեղ
և փառաւոր կառքերի մէջ, սիգաձեւ երկվարներով
կը սլանաք փոշի բարձրացնելով, յիշեցէ՛ք, որ Ձեր
դժբաղդ ազգակիցները Հայաստանում, բոբիկ ոտքե-
րով և թուլացած ծնկներով— թափառում են սարեր
և ձորեր, կերակուր որոնելու, և ճանապարհին թու-
լանալով վայր են ընկնում: Երբ Դուք, երաժշտական
հնչիւններով և ուրախութեան երգերով կը թն-
դացնէք օդը, երգեցէ՛ք Ձեր ազգային տխուր երգերը,
և յիշեցէ՛ք Ձեր դժբաղդ ազգակիցներին, որոնք
Հայաստանի օդը թնդացնում են լացով և աղա-
ղակներով: Մինչդեռ Դուք, ուրախութեամբ շամ-
պանեան զինի կը թափէք, յիշեցէ՛ք, որ Հայասա-
նում թափվում է արիւն, Ձեր դժբաղդ և անմեղ
ազգակիցներէ: } Ո՛հ, դժբաղդ Հայաստան, մինչդեռ
Դու, անհամբեր սպասում էիր Քո ինքնավարու-
թեանը, նորան փոխարինեց սովը, և նորոգեց Քո
վաղեմի վէրքերը: Դու, Քո աչքերը դարձրիր դէպի չորս
կողմը, և ամեն հանդիպողից օգնութիւն խնդրեցիր Քո
վէրքերը բուժելու: Շատ տեսակ մարդիք խղճացին
Քեզ, ամեն մի քարասրտի զուծը շարժուեց Քո
թշուառութիւնը տեսնելով, և շտապեց իւր կարո-
ղութեան չափ օգնել Քեզ: Բայց միայն մէկը մնաց
անտարբեր, միայն մէկը չը կամեցաւ օգնել Քեզ,

որի վերայ դրած էիր Քո ամենամեծ յոյսը: Այո՛,
միայն մէկը, միայն Քո հօգևոր Մայր Աթոռը, միայն
ազգիդ պարծանք— Էջմիածինը, չը խղճաց Քեզ, որի
վերայ դրուած էր ամենամեծ պարտականութիւն:
} Ո՛հ, թշուառ Հայ ազգ, կարծես բնութիւնը Քեզ
ստեղծել է դժբաղդ. ամեն թշուառութեան Դու
պէտքէ հանդիպես: Բայց Քո ամենամեծ թշուառու-
թիւնն այն է, որ Քո հօգևոր և Մայր Աթոռը, բո-
լորովին ուշադրութիւն չէ դարձնում Քո թշուա-
ռութեանց վերայ...:

Վերջապէս բաղդ ունեցանք լսել, որ Նորին
Վեհափառութիւնը, բարեհաճել է ալաշկերտցիների
17,000 (16,358) բուբլ գումարով գնում քսան
և մէկ ուսու— հօսակէ արժեթղթոց տարեկան տու-
կոսիններն, յատկացնել Ալաշկերտի և Բայազէթի
մանկանց դաստիարակութեան, և արդէն նոյն քսան
և մէկ արժեթղթոց կուպոններն, յանձնուել են
Կ. Պօլսի հայոց «Միացեալ ընկերութեան» (1050
գուլդէնի արժողութեամբ), Վեհափառը խոստացել
է, սոյն վճարը ամեն տարի հասցնել նոյն ընկերու-
թեան:

Ալաշկերտցիներին պատկանող ամբողջ հացից,

Հազիւ մի փշռանք բարեհաճել է վեհափառը իւր տէրերին յետ դարձնել, և Կ. Պօլսի «Միացեալ ընկերութիւնը», ապշած բացագանչելով մատուցանում է իւր խորտէ շնորհակալութիւնը, և հրապարակաւ յայտնում է իւր երախտագիտական զղացմունքները Նորին վեհափառութեան:

Ազգային ներկայացուցիչներ, դատապարտելի է Ձեր ընթացքը, այս բանի վերաբերութեամբ: Դուք, որ յանձն էք արել զեկաւարելու ազգային լուսաւորութեան գործը, եթէ Դուք այսպէս էք վարվում ազգային գործերի հետ, ի՞նչ անէ ուրեմն ստորին դասակարգը, որի յոյսը դրուած է Ձեզ վերայ: Դուք յանցաւոր էք ընդհանուր ազգի առաջ: Ի՞նչու ամբողջ հացը թողած, միայն նորա փշռանքներով էք բաւականանում:

Բացի վերոյիշեալ փշռանքից, լսեցինք որ Նորին վեհափառութիւնը, մի փոքրիկ փշռանք էլ, այն է 900 ռուբլի, մի վարդապետի ձեռքով, ուղարկել է Ալաշկերտ, սովեակներին բաժանելու: Այս 900 ռ. զումարի մի մասը, տրուել է յիշեալ վարդապետին, իբրեւ ճանապարհածախք: Այս 900 ռ. զումարի այն մասը, որը ամբողջապէս բաժանուել է սովերոց, վերոյիշեալ արժեթղթոց տոկոսներին հետ, կ'ընդունուի որպէս վճարած, ալաշկերտցիներու մեր հաշուած

ընդհանուր զումարից: Իսկ 900 ռ. զումարի այն մասը, որը վարդապետին տրուեցաւ իբրեւ ճանապարհածախք, ընդունելի չէ մեր հաշուում: Նորին վեհափառութիւնը կարող էր արժեթղթոց նման, առանց վարդապետի ճանապարհածախքը հոգալու, 900 ռ. զումարը ամբողջապէս ուղարկել — Կ. Պօլս, «Սովերոց մասնաժողովին», որը ըստ կանոնի կը տնօրինէր:

Այժմ թող ներուի մեզ, մի համառօտ հայեացք ձգել, Էջմիածնի վարած կեանքի և Հայաստանում տեղի ունեցած թշուառութեանց վերայ:

Էջմիածինը թող լաւ մտաբերէ, ազգի առաջ իւր դրուած սրբազան և հանդիսաւոր ուխտը, որով նա հոգեւորականաց և աշխարհականաց բազմութեան առաջ, երդուել է և ուխտել է հաւատարիմ մնալ իւր սրբազան կոչման, և նուիրել իւր անձը իւր սիրելի ազգին: Իսկ այժմ, ո՞ր են Էջմիածնի այն խոստումները. միթէ նա մոռացել է. իսկ եթէ լաւ յիշում է, ի՞նչու չէ կամենում կատարել. մի՞թէ կարօտութիւն չ'կայ այժմ, արդէն յայտնի է նորան, որ Հայաստանում Հայութիւնը փոանգի է նեխարկուած. — նորա հարազատ զաւակներին Հայաստանում, մահաբեր սովը լափում է...

Էջմիածինը թող չը մոռանայ իւր հարազատ այն զաւակներին, որոնց արիւնագին լումայներէ շնորհիւ վայելում է երջանիկ կեանք: Մինչդեռ Էջմիածինը փառաւոր և շքեղատեսիլ ապարանքների մէջ կը հանդէս, թող դարձնէ իւր աչքերը դէպի հաբաւ — արեւմտեան կողմը — դէպի Հայաստան աշխարհը, ուր նորա հարազատ զաւակները աստանդական թափառում են առանց բնակարանի, բաց օդի մէջ: Մինչդեռ նա երօտական թանկագին և նորը մետաքսեայ դործուածքներով կը զարդարէ իւր մարմինը, թող յիշէ, որ իւր հարազատ զաւակները Հայաստանում, պատառոտած շորերով, մերկ, թշուառ, և ամօթով թափառում են մոլորուած...: Մինչդեռ նա, մեծաքսեայ և թաւիշեայ թանկագին անկողնի մէջ կը հանդէս, թող, յիշէ, որ իւր հարազատ զաւակներին Հայաստանում, վերմակի տեղ ծառայում է բաց երկիւնքը, դօշակի տեղ չոր գետինը, և բարձի տեղ քարը: Մինչդեռ նա, բազմատեսակ անուշահոտ կերակուրներով և ըմպելիքներով կը զոհացնէ իւր ճաշակը, թող յիշէ, որ իւր հարազատ զաւակները Հայաստանում, ցամաք հացի կարօտ, թափառում են աստանդական, հաց, հաց, աղաղակելով...: Մինչդեռ նա, իւր միջի օդը կը թնդացնէ շամպայնեան բութ բիւններով և երաժշտական քաղցր հնչիւններով,

թող յիշէ, որ իւր հարազատ զաւակները, Հայաստանի օդը կը թնդացնեն լացով և աղաղակներով...:

Էջմիածինը չի խղճալ, երբ սովատանջ հայ մայրը իւր չորացած ծիծը մանկան բերանը տուած, աղի արցունքներով թրջում է նորա մանկական անմեղ թշերը: Նա չի խղճալ, երբ սովատանջ հայը, յուսահատութեամբ և ամօթից ինքնասպան է լինում...: Նա չի խղճալ, երբ թոթովախօս հայ մանուկը, որը առաջին անգամ է սովորում «հաց» բառը, հաց, հաց աղաղակելով շունչ է փչում և ոչնչանում...:

Ետ հեռու չէ այն ժամանակը, երբ Էջմիածինը կը հասկանայ, որ այն անձինք են եղել նորա բարեկամները, որոնք խստիւ քննադատել են նորան, իսկ որոնք նորան գովաբանել են առ երեսս, և նորա անունը կնքել են բազմաթիւ փառաւոր ածականներով, նոքա են եղել նորա մեծ թշնամիները...:

Լսեցինք որ, Կ. Պօլսի հայոց ազգային ժողովը հաշիւ է պահանջում Էջմիածնից նորա տասն և չորս ամեայ դործունէութեան: Ահա, մի ամենաշարմար միջոց և ընդարձակ ասպարէզ, որտեղ նա կարող է ցոյց տալ իւր ոչխարազգեստ դայլ թշնամիների երեւակայած իւր դործունէութիւնը: Թող փութ և արեւմտ Էջմիածինը, ցոյց տալու իւր գոր-

ծունէութիւնը ընդհանուր ազգին, և նորանով սե-
ացնել իւր քննադատողների և իւր կարծած թշ-
նամիների երեսը: Իսկ թէ նա չի կամենալ իւր
կամքով հաշիւ տալ ազգին, և կամ տուած հա-
շուից կերեայ փոխանակ գործունէութեան անդոր-
ծունէութիւն, և փոխանակ օգտակարութեան վնաս-
ակարութիւն, դորա մասին մի ուրիշ անգամ:

Վերջացնելով խօսքս, յիշեցնում եմ Էջմի-
ածնին, որ Հայաստանում սովը դեռ ևս շարունակ-
վում է, ուստի բացուած է այժմ նորա առաջ
դարձեալ մի մեծ ասպարէզ գործունէութեան: Իսկ
թէ նա դարձեալ կը շարունակէ իւր մեռելային
դերը կատարել ազգային ճգնաժամի բեմի վերայ,
դորա մասին քննադատութիւնս թողում եմք մի
ուրիշ ժամանակի:

Այժմ խօսենք փոքր ինչ այն անձի վերայ,
որը Էջմիածնի ներկայ կառավարութեան անկարգու-
թիւնների ամենախիստոր հեղինակներից մէկն է, և
որը այսօր մեզ ծանօթ է Մանկունի անունով:

Մանկունի Վահրամ արքեպիսկոպոսին, սկզբից
ազգը ճանաչել է իբրեւ փոքրաւոր (ծառայ) այժմեան
Գէորգ Գ. Կաթուղիկոսի, և թէ ինչպէս է եղել, որ

յանկարծ նա այժմ դարձել է Էջմիածնի ամենա-
ղլխաւոր դեկավար, և Հայ ազգի բռնաւոր կառավա-
րիչ:—այդ մի մեծ դադանիք է, որ դժուարանում
եմք բացատրել:

Մենք այստեղ նպատակ չունեմք նկարագրելու
Մանկունու կենսագրութիւնը, այլ կ'աշխատենք մի-
այն նորա գործունէութիւնից այստեղ յառաջ բերել
այն մի քանի նշանաւոր կէտերը, որոնք շարունակ
տեղի են ունեցել Էջմիածնում, և որոնցով ըն-
թերցողը մի զաղափար կը կարողանայ կազմել նորա
վերաբերութեամբ, որը գուցէ շատերին դեռ ևս ան-
ծանօթ կը լինի:

Թողնեմք բազմաթիւ օրինակները, որոնք ձիշա
ապացոյցներ են մեր գրուածքի, և մասնաւորապէս յի-
շեմք մէկ քանիսը, որոնք դեռ լաւ յիշվում են, թէ
հասարակութիւնից, և թէ նոյն իսկ Էջմիածնի
մէջ:

Վախճանուեցաւ Մխիթարեան Աբէլ արքե-
պիսկոպոսը, և Մանկունու հրամանով, հանդուցելոյ
մարմինը առանց եկեղեցական պատկանեալ հանդիօի,
հասարակ մշակներով թաղուեցաւ.— և զիտէք ի՞նչ
էր պատճառը.— որովհետեւ հանդուցեալը իւր կեն-
դանութեան ժամանակ միակ էր, որ կարողանում էր
Մանկունու գործած անիրաւութիւնները բոլորը երեսին



տալ, և անդադար մաքառելով, չէր կամենում հը-
պատակուել նորա կամայականութեան: Զը մոռա-
նամք յիշելու, որ հանգուցեալը իւր քանքարաւոր
աշխատութիւններով, միակ էր Էջմիածնի միաբա-
նութեան մէջ, որի գործունէութեան քաղցրիկ պը-
տուղները, այժմ ինքը՝ Մանկունին վայելում է:

Վախճանուեցաւ Ասլանեան Զովհանէս եպիս-
կոսոսը, և նորա մարմնի հետ ևս նոյն ձևով վա-
րուեց Մանկունին, որովհետեւ հանգուցեալներից ոչ
մէկին չը կարողացաւ վրէժխնդիր լինել նոցա կեն-
դանութեան ժամանակ, իսկ նոցա մահից յետոյ,
իւր վրէժը առաւ նոցա անշնչացած դիակներից,
որոնց շատ անգամ խնայում է մինչև անգամ արիւ-
նարբու քուրդը...: Այլ ևս չեմք խօսում այն նե-
ղութիւնների վերայ, որ կրեցին վերոյիշեալ սրբա-
զանները իւրեանց վերջին հիւանդութեան օրերում:
Մանկունու ձեռքից, որը արգելեց մինչև անգամ
Երևանու դեղատնից (АПТЕКА) հիւանդների համար
դեղ բերելը, և այլն...:

Ռաիայի հայերի և իւրեանց քահանայ Տէր—
Գալուստի մէջ ծագեցաւ խռովութիւն, և ժողո-
վուրդը սկսեց բողոքել Էջմիածնին, որ քննութիւն
նշանակէ և պատժէ իւրեանց քահանային, և կամ
նորա տեղ մի ուրիշին ուղարկէ: Բայց Մանկունին

ոչինչ ուշադրութիւն չը դարձրեց ժողովրդի բողոք-
ների վերայ, որով պատճառ դարձաւ, մէկ քահա-
նայի համար, տասնեակ հազարներով հայ ժողովրդի
օտարազգի եկեղեցու գիրկն անցնելու...:

Կ. Պօլսում թուրքաց պաշտօնանների հետ
դաշնակցութիւն կապեց, ինչպէս պարծենում է,
ազգի ահագին գումարներով (մինչև 25,000) նոցա
զրպանները լըրեց, և նոցա օգնութեամբ Խրիմեան
Մկրտիչ արք—եպիսկոպոսին Կ. Պօլսի հայոց պատ-
րիարքութիւնից հանեց: Եւ այժմ, ինչպէս ինքը
պարծենում է, նոյն ձևով կամենում է վարուել Կ.
Պօլսի հայոց այժմեան պատրիարք Ներսէսի հետ,
որին պատրիարքութիւնից հանելու համար յետ է
դրել 50-60,000 ռ., որը պէտք է ածէ թուրքաց
անյադ նախարարների փորը: Բայց յուսով եմք, որ
գոնէ Կ. Պօլսի հայ ինտելիգենցիան այնքան ինքնա-
ճանաչութիւն կ'ունենայ, որ չի բաժանուիլ մեր ընդ-
հանուրիս սիրելի Ներսէսից, այլ կը խորատակէ Ման-
կունու զիւական, օգի մէջ կառուցած ամրոցները:
Իսկ ո՞րտեղից է այդքան գումարը ասացէ՛ք՝ խնդրեմ
եթէ ոչ ազգային:—Վերոյիշեալ փաստերի վերայ
հիմնուելով, մի՞թէ իրաւունք չենք ունենալ կասկա-
ծելու, որ Ս. Ներսէսի թունաւորելու և աքոորելու
փորձերը, թելադրուած էին այս աղբիւրից:

Պիարրէքիւրի առաջնորդ Փիլիպպոս եպիսկոպոսը եկաւ Էջմիածին կաթողիկոսի հետ խօսելու կարևոր բաների վերաբերութեամբ, և Մանկունին փիլոնը պատառոտելով վրէժն և ծեծելով, շաթրներին քաշքշել տալով, տարաւ և բանտարկեց մի դժոխային սենեակում, դրանը պահապաններ կանգնեցնելով: Եւ իւր բարբարոսութիւնները արդարացնելու համար, սուտ լուրեր տարածեց, որ իբր թէ Փիլիպպոս եպիսկոպոսը ընկալելով ձեռքին գնում էր կաթողիկոսին սպանելու, և նորանով նա ազատեց իւր սիրելիի անփոխարինելի կեանքը:

Այն ևս պէտք է գիտենալ որ, Փիլիպպոսը այն սարդն էր, որ Հայկական խնդրի ժամանակ, ինչպէս և միշտ, պէտք է արտայայտէր Հայաստանցի հայոց թշուառ և աղետալի վիճակի խորին զղացմունքները, և բողոքէր Թիւրքիայի անգութ պաշտօնեաների և վայրենաբարոյ քսուրդերի բարբարոսութեանց դէմ...: Բայց Էջմիածնի Բիկոնսթիլըդը այլապէս տնօրինեց:...

Մանկունին հրամայեց նոյնպէս, որ Երևանու առաջնորդ ծերունի Նղիպար արք-եպիսկոպոսից առնուի արքութեան տիտղոսը և աքսորուի Գեղարդայ վանքը:— Ահա, այն անձինք, որոնք այնքան տարիներ շարունակ ծառայել են ազգին, և իւրեանց երիտասարդական թանկագին կեանքը մաշել են

ազգային ծառայութիւնների մէջ, այսօր առանց հարցնելու նոյա թէ ծերութիւնը և թէ տկարութիւնը, թափում է Մանկունին նոյա վերայ իւր վրէժնեղութեան կատաղի թոյնը: ...Իսկ ազգը, հինգ միլիոն հայ ժողովուրդը, զոնէ իրան ինտելիգենտ կոչող բարձր դասակարգը, ի՞նչ է մտածում... — մեռելային լուծիւն...:

Մանկունու վերայ պատմութիւնը մեզ յիշեցնում է այն Հերոստրատ, անունով յոյնին, որը կամենալով իւր անունը հռչակել և անմոռաց պահել պատմութեան մէջ, բարեգործութեամբ չէր կարող, և ահա նա ընտրեց մէկ աւելի հեշտ միջոց. նա կրակ տուաւ և այրեց Նիքսոսի տաճարը և ազգային մատենադարանը, որոնք այն ժամանակ ամբողջ Յունաստանի մէջ համարվում էին ամենաերևելի և հարուստ հիմնարկութիւններ: Եւ իրաւ, մինչև այսօր և շարունակ, թէ ընդհանուր և թէ Յունական պատմութեան մէջ, նորա անունը փնում է որպէս հայրենիքի դաւաճան: Նոյնպէս և Մանկունին զուցէ կամենալով իւր անունը հռչակել և անմոռաց պահել, բայց բարեգործութեամբ չը կարողանալով և զուցէ դժուարանալով, նա ընտրել է աւելի հեշտ միջոց. նա իւր ձեռքից եկածը ոչինչ չէ խնայում իւր ազգին վնասելու, ինչպէս տեսանք, միայն թէ փոքր ինչ շահ

ունենար: Եւ կարծեմ որ, նորա անունը կ'անմահանայ
և կը յիշուի Հայոց ապագայ պատմութեան
մէջ, այն ձևով, ինչպէս յիշվում է հայրենասէր
յոյնը:

Իսկ մենք խորհուրդ կը տամք Մանկունուն, որ
իւր մեղքերը զղջայ, իւր ազգը խղճայ, և դադարեցնէ
իւր ազգավնաս գործողութիւնները, բաւականանալով
տուած վնասներով: Բայց թէ նա դարձեալ կը շա-
րունակէ իւր վնասակար ընթացքը, և դիւական ժպի-
տով կ'արհամարհի մեր գրուածքը — դորա մասին մի
ուրիշ անգամ: — Իսկ առ այժմս վերջացնելով խօսքս,
կը քննամ լքմիածնի — Մայր — Աթոռոյս հարազատ
և խոնարհ որդի և ճշմարիտ բարեկամ:...

Արմենակ Սիւնի:



Ա. Բ. - ԿԱՐՔ-Ի ՎԵՐԻՆ
1932

ՀՀ Ազգային գրադարան



NL0345252

